№ 220 ՈՒՐԲԱԹ, 5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 220

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲԼԻ։

Հոկտեմ. 1-ից մինչև նոյեմ. 1-ը 85 կ.։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaktion du journal „MSHAK“.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К⁰, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐՏԻՍՏԵԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲ
1912—1913 թ. սեզօնի բացում
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԵՐԵԿՈՅԹ
ՆՈՒԻՐՎԱԾ Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կը ներկայացվի
ԱՆՄԱՀ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԵՐՋԻՆ ԵՐԿԸ
I
ԿՏԱԿ 2 գործողութեամբ։
II
ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ Բ. գործողութիւն։
III
ՊԷՊՕ Գ. գործողութիւն։

Մասնակցում են. տ. տ. Արմէնեան, Արուսեակ, Գուլազեան, Ցամիկ, պ. պ. Բերոյեան, Ղազարեան, Մամիկոնեան, Միրաղեան, Ցարութիւնեան, Տէր Առաքելեան, Տէր-Գրիգորեան, Տէր-Դաւթեան և Փիրումեան։

Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին:

Տեղերի գները—3 րուբլուց մինչև 25 կոպ.։ Օթեակները—լոժեր՝ 10 ր. 30 կ., բենուար՝ 5 ր. և բելետաժ՝ 4 րուբլի։

Տոմսակների գնից զեղչում ունենալու են միմիայն Հայոց Դրամատ. Ընկերութեան անդամները և աշակերտները։

Ռեժիսսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Տ. Ցովհաննիսեան, Վ. Մամուլեան
ատ. 745. 3—1

Տասն տարուց ի վեր կազմում եմ
Հայկական Արձանագրութիւնների Ժողովածու
CORPUS INSCRIPTIORUM ARMENICARUM
Զարդարված արձանագրութիւնների բազմաթիւ լուսանկարներով։
Ուստի խնդրում եմ ուղարկել ինձ արձանագրութիւնների լուսանկարներ, որոնց արժէքը ըստ պահանջման կը հատուցանեմ, կամ փոխարէնը լուսանկարներ կը տամ իմ կազմած ալբոմներից։
Երուանդ Լալայեան
Հասցէս. Тифлисъ, Лермонтовская № 1. (կ.) ատ. 744. 4-1

РУССКОЕ ОБЩЕСТВО ПАРОХОДСТВА и ТОРГОВЛИ
Ռուսաց Շոգենաւային եւ Առեւտրական Ընկերութիւնը
սրանով յայտարարում է, որ ԱՄՍԻՍ 5-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Թիֆլիսի գրասենեակը
ՏԵՂԱՓՈԽՎՈՒՄ Է
Սօլօլակսկայա փողոց, № 8, ՕՏՏԷՆԻ ԴԵՂԱՏԱՆ վերև, ՎՈԼԺՍԿԻ-ԿԱՄՍԿԻ ԲԱՆԿԻ դիմաց։
Գրասենեակը բաց է առաւօտեան ժամը 9—3-ը։ ✦ Հեռախօս № 11.
Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց
(ա. օ.) ատ. 742. 4—2

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

Հոկտեմբերի 13-ին լոյս կը տեսնի «ՏԱՐԱԶԻ» հրատապ № 10 նուիրված ՀԱՅ ՏԱՌԻ 1500-ամեայ և ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 ամեայ ՅՈԲԵԼԵԱՆԻՆ։ Գինը մինչև հոկտեմբերի 10-ը բաժանորդագրվողների համար (մէկ) 1 րուբլի, լոյս տեսնելուց յետոյ 3 րուբլի:

Դիմել՝ ТИФЛИСЪ, Редакція „ТАРАЗЪ“.

Պատմական անձանց պատկերներ, ծաղկանկարներ և այլն և այլն Չափ և շքեղ հրատարակութիւն։

26. 5—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Օգնական Prof. Posner-ի
Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին Բերլինի իր խորհրդակցական կաբինէտի և պրոֆ. Պօզնէրի կլինիկայի մէջ։ Տալիս է նաև խորհուրդներ միւս մասնագիտութիւնների վերաբերեալ։
Հասցէն՝ D-r Muradoff Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon amt Norden 113—19.
(չ. ու. կ.) ատ. 675. 30—11

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
Ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի։
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնևմատօրակտով։
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.
Սօլօլակ, Ռուդչեվսկայա 10 (Լերմօնտօվսկ. դեղատան դիմացը)։
(ա. օ.) ատ. 746. 100 - 1

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱՒՏԻ և սրտի։
Բժշկութիւն նաև տուբերկուլիններով, ՐԱԴԻՈ պրէպարատներով և էլեկտրականութեամբ։
Ընդունելութիւնը ամեն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանովսկայա)։ Հեռախօս 7—92.
(ա. օ.) ատ. 699. 100—14

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
3 հոկտեմբերի

Պոդգորիցա.—Գեներալ Մարտինովիչի հարաւային գումարտակը կարճ և տաք կռւից յետոյ գրաւեց Մուրիչ լեռան բարձունքը, որ կարևոր դիրք է ներկայացնում Տարաբաշի դէմ։ Աւարտւել են Տարաբաշը ռմբակոծելու պատրաստութիւնները։ Վուկոտիչի հիւսիսային գումարտակը շարունակում է պատերազմական գործողութիւնները Բէրանի դէմ։ Բէրանին օգնութեան եկան 1500 առնաուտ Կոսովայից։ Միջին գումարտակը, պատրաստւում է առաջանալ Տուզից դէպի Սկիւտար։

Տուզի ամրութիւնները Դուշչնի սարը, Սկիւտարի լճի մօտ, անձնատուր եղաւ կէս գիշերին 250 զինւորներով, օֆիցէրներով, թնդանօթներով ու գնդացիրներով։ Թագաւորը ընդունեց Տուզի հրամանատարին։

Դանիլօ և Պետր արքայազները աւտոմօբիլով մեկնեցին Կրուշէվան՝ Թագաւորի մօտ, ցնծագին ողջունւելով ժողովրդից։ Պոդգորիցան և շրջակայքը հրավառւած են։ Տուզիի և Շիպչանիկի գրաւումը ստեղծել է աննկարագրելի ուրախութիւն, որովհետև մինչև Սկիւտար մնում է վերցնել սոսկ վերջին բերդը՝ Խէլմատ։ Չեռնոգորցիք Տուզիում ձեռք են ձգել 3 անգլիական և 2 գերմանական սիստեմի թնդանօթ և 4 էլ փչացած, 8 գնդացիր, 7000 մաուզէր, 800 վրան, շատ ռազմամթերք և ուտելիք։

—

Կ. Պոլիս.—Վերջին շաբաթում դրութիւնը առաջվայ նման սաստիկ լարված է։ Մեծ պետութիւնների հաւաքական նոտան շատ քիչ ազդեց Թիւրքերի վրա, չը գոհացրեց նաև բալկանեան պետութիւններին։

Պատերազմական գործողութիւններ սկսելու յապաղումը, որ արգասիք է Բ. Դրան բանակցութիւնները ձգձգելուն՝ ժամանակ վաստակելու նպատակով, ինչպէս և դաշնակիցների անպատրաստ լինելուն պատերազմելու, ծառայեց յօգուտ Թիւրքիայի։ Զօրաժողովը աւարտվեց. զօրքերի առաքումը Եւրոպա կատարվում է աշխոյժ։ Վերջին երկու օրում Փոքր-Ասիայից շոգենաւերով ուղարկել են 43,000 զինւոր։ Արևելեան զօրաբանակի համար Կ. Պոլսից գնացքներով ուղարկել են 10,000։ Ընդամենը եւրոպական նահանգներում գտնվում են մօտ 350,000 զինւոր, որից պատերազմի դաշտում—300,000։ Այս շաբաթվայ վերջին պատերազմի դաշտում կը լինեն մօտ 375,000։ Զօրքերը զինված են շատ լաւ։ Նաւատորմը գտնվում է Բոսֆորում պատրաստվելով մտնել Սև ծովը բալկանեան ծովափը ռմբակոծելու համար։ Գլխաւոր բանակատեղին ժամանակաւորապէս լինելու է Սան-Ստեֆանօյում, ուր սուլթանը կը դիտէ զօրքերին։ Գլխաւոր բանակի հետ կը մեկնեն օտարազգի թղթակիցները, ի թիւս որոց Պետ. Հեռ. Գործ. թղթակիցը։ Թղթակիցներին թոյլատրված է միայն գլխաւոր բանակում, այն էլ շատ ճնշված պայմաններով։

Վելէսում կոտորածները համեմատաբար աննշան էին և կապւում են ուժանակային մահափորձերի հետ, որոնք իբր գայրացրել են զօրքերին։ Բ. Դրան տեղեկութիւնների համաձայն սպանվել են 12 բուլղար։

Օսմանեան գործակալութիւնը հաղորդում է, որ Թիւրքիայի և Յունաստանի դիպլոմատիական յարաբերութիւնները խզվել են այն հանգամանքից, որ կրէտացի պատգամաւորները ընդունվեցին հելլենական պարլամենտում։ Նոյնպէս խզված են դիպլոմատիական յարաբերութիւնները Սերբիայի և Բուլղարիայի հետ, ի նկատի ունենալով որ այդ պետութիւնների նոտաները յանձնված են Թիւրքիայի ներկայացուցիչներին Բէլգրադում և Աթէնքում։ Այդպիսի նոտա յանձնված է Բ. Դրան ներկայացուցչին Աթէնքում, սակայն վերջինս մերժեց ընդունել այն։

Կ. Պոլսում պաշտօնավարող գերմանական դեսպանը գերմանական դեսպանատան շինութեան կէսը յատկացրեց 100 վիրաւորների պառկեցնելու համար։ Անգլիական, ֆրանսիական և աւստրո-ունգարական դեսպանները նոյնպէս վճռեցին ընդունել վիրաւորված Թիւրքերին իրենց հիւանդանոցներում։

Օսմանեան գործակալութիւնը հաղորդում է, որ Թիւրքաց զօրքերը յաղթեցին Կրանիայի ափերին՝ Սկիւտարի մօտ։ 4 բատալիօն ջարդեցին 8000 չեռնօգորցիների, որոնք կորցրին սպանված 600 մարդ։

Սերբիական սահմանագլխում Զիբէվչէվի մօտերը ճակատամարտ է։

Մինիստրների խորհուրդը, վճռելով անպատասխան թողնել բալկանեան պետութիւնների նոտան, միևնոյն ժամանակ որոշեց բողոքել մեծ պետութիւնների առաջ բալկանեան պետութիւնների գործելակերպի առիթով և գոհացում պահանջել։

Յունաց դեսպան Գրիպարիսը այն է կամենում էր մեկնել, երբ ծանուցում ստացաւ, թէ Բ. Դուռը որոշել է ազատ արձակել յունաց շոգենաւերը եւրոպական ապրանքներով։ Յունաստանը զիջելով մեծ պետութիւնների խորհուրդներին, պատրաստ է առ ժամանակ բաւականանալ այդ զիջումով, շարունակելով բանակցել նաւերի հարցի մասին։ Դրութիւնը թւում է չափազանց խճճված։

Օսմանեան գործակալութիւնը հաղորդում է, որ Բ. Դուռը վճռեց խզել դիպլոմատիական յարաբերութիւնները բալկանեան երկիրների հետ, յետ կանչելով իր ներկայացուցիչներին։ Միւս կողմից բալկանեան պետութիւնների ներկայացուցիչները մնում են այստեղ, իսկ Յունաստանը նոյնիսկ նոտա է փոխանակում Բ. Դրան հետ։

—

Բէլգրադ.—Ցամառ լուր է տարածված, թէ Թիւրքիայի դեսպանները Բէլգրադում, Սօֆիայում և Աթէնքում իրանց կառավարութիւնից պատուէր ստացան մեկնել։

Սերբիական հեռ. գործակալութիւնը պաշտօնապէս հերքում է Կ. Պոլսի լրագիրների այն տեղեկութիւնը, իբր թէ սերբերը փորձել են արշաւել Սէնիցի կողմը և ընդ սմին յետ են մղվել։ Ընդհակառակն, իրանք սերբերը ենթարկվեցին Թիւրքերի յարձակմանը Րիստովայի և Բրազովայի միջև, ուր սերբերը բաւականացան ինքնապաշտպանութեամբ։

(Հերթական-ճեպընթաց)։ Թիւրքաց միսսիան արտաքին գործերի մինիստրութեանը տեղեկացրեց, որ Թիւրքաց կառավարութիւնը մերժում է սերբիական նոտայի պահանջները, և միաժամանակ յայտնեց, թէ պատուիրված է Թիւրքաց դեսպանին անմիջապէս մեկնել Կ. Պոլիս: Սերբիան անյապաղ յետ կը կանչէ իր դիպլոմատիական ներկայացուցիչներին Թիւրքիայից:

Գործող զօրքի գլխաւոր շտաբը մեկնեց Նիշ։ Բալկանեան պետութիւնների զօրքերին կից գտնվող սերբ պատգամաւորները մեկնեցին իրանց տեղերը։

—

Սօֆիա.—Թիւրքիայի հաւատարմատարը յայտնեց Գեշօվին, որ Բ. Դուռը պատուիրագրել է նրան իր պաշտօնակիցների հետ հեռանալ Սօֆիայից, և խնդրեց յանձնել իր անցագրերը և նշանակել մեկնելու ժամանակը։ Կարծում են, որ Թիւրքաց միսսիան կը մեկնէ երեկոյեան։

Մինիստրների խորհուրդը քննում է բուլղարական դեսպանին Կ. Պոլսից յետ կանչելու հարցը։

—

Վիեննա.—«Ֆրեմդէնբլատը» յայտնում է, որ բոլորովին անհիմն են այն լուրերը, թէ իբր միաբանութիւն չը կայ բալկանեան պետութիւնների միջև։

Լրագրական տեղեկութիւնների համաձայն՝ արդիւնաբերողներ Դրէհերը և Շէլլերը 100,000-ական կռօն յատկացրին աւստրո-ունգարական օդային նաւատորմի համար։

Փակվեց ունգարական պատգամաւորական ժողովը։ Պատգամաւոր Խօշսուն ցանկացաւ, որպէս զի Աւստրիան կարող լինի խաղաղութիւն պահպանել կամ չէզոքացնել պատերազմը այժմ։

Աւստրիան պատերազմի բեմն է ուղարկում սանիտարական խմբեր։

«Րէյխս-Պոստի» ասելով, բալկանեան պետութիւնները Վիեննայում տուել են ռազմամթերքների պատուէրներ։ Թիւրքիան յանձնեց Վիեննայի բանկին՝ պատուէրների համար տալ 20 միլիօն կռօն։ Բուլղարիան մտադիր էր աւելի մեծ պատուէր տալ, բայց գործարանը հրաժարվեց կատարել այն Բուլղարիայի ցանկացած ժամանակամիջոցում։

—

Բերլին.—Չեռնօգորական թագաւորը Պոդգորիցայում ընդունեց «Բերլին. Տագ.»-ի թղթակցին և յայտնեց, որ շատ ցաւում է արիւնհեղութեան համար, սակայն սպառելով բոլոր խաղաղ միջոցները, նա վճռեց վերջին քայլը անել, անսալով ժողովրդի ձայնին։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
3 հոկտեմբերի

Ուշի.—Հաշտութեան պայմանների մասին կայացրած արձանագրութիւնը ստորագրելուց յետոյ կը հրատարակվի սուլթանական իրադէ Տրիպոլիսի և Կիրենաիկի աւտոնօմիայի մասին, յետոյ իտալական թագաւորի հրովարտակը՝ Լիվիայի կառավարութեան մասին Իտալիայի գերիշխանութեան ներքոյ։ Թիւրքիան պարտաւորվում է ամնիստիա տալ Եգէյեան ծովի կղզիների ազգաբնակութեանը, և յետոյ միայն կը ստորագրվի հաշտութեան վերջնական պայմանագիր, որից յետոյ կը դադարեն բոլոր պատերազմական գործողութիւնները, կը վերսկսվեն երկու պետութիւնների բարեկամական փոխ-յարաբերութիւնները։

—

Հռոմ.—Հաշտութիւն կնքելու տեղեկութիւնը հասարակութիւնը ընդունեց սառնասիրտ։ Պաշտօնական մամուլը ընդգծում է խաղաղութեան օգուտը և պատերազմի փայլուն վախճանը։

—

Չիկագօ.—Ռուզվէլտի ստացած կրծքի վէրքը լուրջ է։ Ռուզվէլտին տարան հիւանդանոց։

—

Նիւ-Եօրկ.—Տաֆտը և Վիլսօնը դադարեցրին ընտրողական պայքարը Ռուզվէլտի վիրաւորվելու պատճառով։

—

Վատի (Սամոս).—Կարգ ու կանոնը վերականգնվեց մեծ պետութիւնների զօրքերի և ռուսաց, ֆրանսիական և անգլիական հիւպատոսների միջամտութեան շնորհիւ։ Իշխանի իրաւունքները վերականգնվեցին։

—

Լոնդոն.—Րէյտէրը տեղեկացաւ, որ Ֆրանսիայի առաջարկութիւնը մեծ պետութիւնների կօնֆերենցիա գումարելու վերաբերութեամբ — բալկանեան հարցի քննութեան համար—ստացվել է այստեղ և ենթարկվել է լուրջ քննութեան։ Սակայն մտածում են, որ կօնֆերենցիան անկարելի է անմիջապէս գումարել՝ նկատի առնելով պատերազմական գործողութիւնները։

—

Տրիէստ.—Սլաւօնական «Էդինօստ» քաղաքական միութեան ժողովում ընդունվեց համակրական բանաձև բալկանեան պետութիւններին ուղղված։

—

Օդեսսա.—Կարմիր Խաչը ձեռնարկեց սանիտարական խմբեր ուղարկելու Բալկան։

Ֆրախտները ամեն օր աւելանում են։

—

Վիէննա.—Աւստրիական պատգամաւորութիւնը վերջացրեց զբաղմունքները։ Բերխտօլդը կայսրի անունից շնորհակալութիւն յայտնեց պատգամաւորութեանը հայրենասիրութեան համար։ Նախագահի ճառից յետոյ եղան բացագանչութիւններ ի պատիւ կայսրի։

Աւստրիական պատգամաւորութիւնը ընդունեց զինւորական և ծովային մինիստրութիւնների բիւջէները լրացուցիչ գումարների հետ։

—

Սիմլա.—Լհասայից տեղեկացնում են, որ տիբէտցիների կռիւները չինացիների հետ վերսկսվել են։ Տիբէտցիները յարձակվել են չինացիների կողմից անցած վանքի վրա։ Չինական զօրքերը կորցրին 400 մարդ։

«РОССІЯ» ԹԵՐԹԸ ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
3 հոկտեմբերի

Պետերբուրգ.—Բալկանեան դէպքերի առիթով «Россія» լրագիրը, կանգ առնելով Ռուսաստանի քաղաքականութեան և միւս մեծ պետութիւնների դէպի ներկայ ճգնաժամը տածած վերաբերմունքի վրա, ասում է. «Ռուսաստանի համակրանքը ներկայ բոպէին այնտեղ է, ուր նա միշտ եղել է, այսինքն մեր դաշնակիցների և համախոհների կողմն է։ Այս մենք չենք կարող և չենք ուզում թագցնել ոչ մեզանից, ոչ էլ ուրիշներից։

«Կշռելով մի առ մի մեր շահերը՝ մենք ամենից առաջ կանգ ենք առնում ամենաէականի վրա, այսինքն այն հանգամանքի վրա, որ ազգաբնակութեան բոլոր խաւերն անխտիր և ներքին կեանքի բովանդակ կողմերը պահանջ ունեն խաղաղութեան, առանց զոհ բերելու մեր իրական շահերը։ Կանգ առնելով այդ հողի վրա, կառավարութիւնը զգում է իրան ամուր՝ պաշտպանված ռուս ժողովրդի ահագին մեծամասնութիւնից։ Նրան չեն կարող խռովել ոչ մամուլի յարձակումները, ոչ իսկ ծայրայեղ ոգևորութիւնները։ Իր գլխաւոր նպատակը խաղաղութեան պահպանումը ընդգծած ունենալով, կառավարութիւնը իրան հաշիւ է տալիս նրանում, թէ սոսկ ցանկութիւնը բաւական չէ բնաւ խաղաղութիւնը պահպանելու համար։ Կարող են խօսել կամ թոյլերը, կամ թէ ուժեղները։ Չը տարվելով ոչ լաւատեսութեամբ և ոչ չափազանցութեամբ, մենք կարող ենք ասել, որ Եւրոպայում խաղաղութիւնը պահպանելու ամենալուրջ գրաւականներից մինը հանդիսանում է այն հանգամանքը, որ Ռուսաստանը ոչ միայն խաղաղասիրութեամբ է տրամադրված, այլ և նա իրանից ներկայացնում է ամենալուրջ ու ազդու մի ոյժ։ Միւս կողմից Ռուսաստանը ընդգծում է, թէ ընդհանուր քաղաքական կացութիւնը դասաւորվում է էլ աւելի նպաստաւոր կերպով Եւրոպայում խաղաղութիւնը պահպանելու համար։

«Ամենից առաջ,—գրում է «Россія»-ն—մենք հարկ չունենք պնդելու Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի յարաբերութիւնների համերաշխութեան վրա, իսկ այդ համերաշխութիւնը ինքնին անգնահատելի ֆակտոր է համաեւրոպական խաղաղութեան պահպանման համար։ Որևէ կասկածի այդօրինակ բացակայութեամբ ենք մենք վերաբերում դէպի Եւրոպայի հաւասարակշռութիւնը լրացնող եռապետեան դաշնակցութիւնը։ Մասնաւորապէս մեր յարաբերութիւնները այդ կազմի մէջ մտնող պետութիւններից իւրաքանչիւրի հետ գերազանց լաւ են։ Չենք կարող չը շեշտել գոհունակութեան զգացմունքով, որ այն ժամանակ, երբ Բալկանում ճգնաժամը սկսեց աւելի ու աւելի սուր բնաւորութիւն ստանալ, խաղաղութիւնը պահպանելու ընդհանուր ցանկութիւնը հիմք ծառայեց մերձեցման և բացարձակ մտքերի փոխանակութեան Պետերբուրգի և Վիէննայի կաբինետների միջև։ Չէ կարելի չը գնահատել բաւականին այդ իրողութեան բովանդակ նշանակութիւնը ինչպէս ընդհանուր խաղաղութիւնը պահպանելու, այնպէս և այն գրական հետևանքների տեսակէտից, որոնք կայացան մեր արտաքին գործերի մինիստրի Լոնդոնում, Պարիզում և Բերլինում գտնված միջոցին։

«Շնորհիւ ռուսական դիպլոմատիայի ջանքերի, որոնց աջակցում էր այնքան աջող կերպով Ֆրանսիական կառավարութեան նախաձեռնութիւնը, եւրոպական բոլոր պետութիւնները միացան երկու սկզբունքի ճանաչման հողի վրա—օրինաւորութիւնը բալկանեան պետութիւնների ձգտման դէպի ռէֆորմները Եւրոպական Թիւրքիայում, որպիսի ռէֆորմները ապահովված են բաւականաչափ երաշխաւորութեամբ հողային status quo-ի անձեռնմխելիութեան մասին այն դէպքում, եթէ չաջողվի խափանել պատերազմը Բալկաններում։ Այդ յայտարարութեան ոյժը սաստկանում է այն հանգամանքով, որ բոլոր պետութիւնների կողմից նա ներկայացվեց բալկանեան պետութիւններին՝ դրութեան մէջ ամենից շատ շահագրգռված Ռուսաստանի և Աւստրիայի կողմից։ Ճիշդ է, յայտարարութիւնը արվեց բալկանեան մայրաքաղաքներում, բայց միթէ պարզ չէ, որ նա նոյն չափով պահպանում է նշանակութիւնը այդ յայտարարութիւնն անող երկու պետութիւնների համար, հանդիսանալով նոր ակնյայտ ապացոյց Եւրոպայի և բալկանեան պետութիւնների առաջ այն սկզբունքների, որոնք դրվել են իբրև հիմն նրանց քաղաքականութեան։ Միթէ միայն այդ հանգամանքը բաւական չէ՝ վերջ դնելու համար այն անհիմն տրտունջներին, որոնք վերջին ժամանակը թափվեցին Ռուսաստանի և Աւստրիայի գլխին, որոնք միացել են անշահասէր խաղաղացման ընդհանուր գործի մէջ»։

Ի վերջոյ «Россія» թերթը ասում է.

«Մենք գտնվում ենք Բալկաններում այնպիսի դէպքերի շեմքին, որոնց ելքը ոչ ոք չէ կարող գուշակել։ Մենք հաւատում ենք, որ բոլոր պետութիւնների ջանքերը ուղղված կը լինեն՝ որքան հնարաւոր է շուտով վերջ դնել արիւնհեղութեան յօգուտ թէ մարդկութեան և թէ խաղաղութեան, ինչպէս և երկու պատերազմող կողմերի։ Մենք ներկայ հանգամանքներում շօշափում ենք հաստատ հող պետութիւնների հետ ունեցած յարաբերութիւնների մէջ և մեր ունեցած ոյժի գիտակցութեան մէջ, որի պահպանման համար ամեն ժամանակ կը գտնվեն հարկաւոր միջոցներ։ Ոչ մի իլլիւզիա չունենալով դրութեան ծանրութեան մասին, մենք զգուշութեամբ և արժանութեամբ նայում ենք առաջ այն հանգիստ համոզմամբ, թէ ունենք միջոցներ և զօրութիւն՝ պաշտպանելու ժողովրդական շահերը և Ռուսաստանի արժանապատւութիւնը, երբ և այդ հարկաւոր լինի»։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Հեռագիր «Բիւզանդիոնի»)

Եզնկիա, 19 սեպտեմբեր

Հակառակ Եզնկիոյ առաջնորդին 5 օր առաջ կառավարութեան մօտ ըրած դիմումին, ոստիկան-զօրաց հազարապետին և ոստիկանական գլխաւոր կոմիսէրին պաշտօնէ գիտակցութենէ զուրկ ըլլալուն պատճառաւ նախորդ գիշեր, Եզնկիայէն և շրջականերէն Ոսկեբերանի վանքը գացող 30 ուխտաւոր և մէկ քանի խլամ ճամբորդներ կողոպտուեցան աւազակներու կողմէ։ Սեբաստիոյ և Եզնկիոյ կողմերն ալ այժմ երևան ելած են 6 աւազակախումբեր։ Այս պարագան ցաւօք կը տեղեկագրենք, ի պատասխանի ներքին գործոց մինիստրին ապահովիչ յայտարարութեան։

Գալաքեան վարդ.

—

Երիտ.-Թիւրքերի օրգան «Թանինը» վերջերս հրատարակել էր մի գրութիւն, որով յայտնում էր, թէ Երզնկայի շրջանում անդորրութիւնը խանգարված է, ուստի և առևտրական ապրանքները Էրզրումի ճանապարհով են փոխադրվում։ Դրան ի պատասխան Երզնկայի քաղաքապետութեան նախագահը «Սաբահին» ուղղած իր մի հեռագրով բողոքում է «Թանինի» այդ հրատարակութեան դէմ, յայտնելով որ Երզնկայի շրջանում, որ գտնվում է Էրզրումի կուսակալութեան սահմաններում, անդորրութիւնը, ինչպէս և հայ-թիւրքական յարաբերութիւնները աւելի քան երբեք լաւ են, իսկ «Թանինի» արած հրատարակութիւնները կրում են պրովակացիոն բնոյթ։

—

Վանի առաջն. տեղապահ Ցովսէփ արքեպ. Սարաճեան և Աղթամարի կաթող. տեղապահ Եղիկի վ. հաւաքական մի հեռագրով հաղորդում են Կ. Պոլսի ազգ. պատրիարքարանին, թէ կառավարութիւնը Վանի շրջանում աւազակներին շարունակում է հետապնդել, բայց նոյն հեռագրողները գտնում են, որ անհրաժեշտ է պատասխանատուութեան ենթարկել նաև նրանց, որոնք աւազակներին ապաստան են տալիս կամ որևէ օգնութիւն են հասցնում։ Հեռագրողները խնդրում են, որ պատրիարքարանն այդ առթիւ համապատասխան դիմում անի կառավարութեանը։

—

Սեպտ. 19-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի խառն ժողովին տեղեկութիւն տրվեց, թէ կառավարութիւնը վերջերս Վանի կուսակալութիւնից հեռագիր է ստացել, որով հաղորդվում է, թէ յիշեալ կուսակալութեան սահմաններում կառավարական զինուորները ընդհարում են ունեցել մի աւազակախմբի հետ, որը բաղկացած է եղել հայերից և կրելիս է եղել արգելված զէնքեր։ Այդ աւազակախմբից սպանվել է, ըստ նոյն աղբիւրի, երկու հոգի։ Վանի առաջն. տեղապահ Սարաճեան արքեպ. այդ առթիւ դիմել է կառավարութեանը և պնդել, որ քննութիւն նշանակվի, քանի որ, ըստ Տ. Սարաճեանի, հայերը չեն ընդունում աւազակախումբ կազմելու ամբաստանութիւնը, այլ կազմված խմբերը կարող են միայն անձնապաշտպանութեան խմբեր լինել՝ քիւրդ հրոսակախմբերի դէմ։

—

Բիթլիսի շրջանում հայ գիւղացիները՝ տեսնելով տեղական կառավարութեան թոյլ ընթացքը և իրանց զգալով անպաշտպան՝ ապաւինել են ինքնապաշտպանութեան։

—

Սեպտ. 15-ին Խիզանից հեռագրել են Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին, թէ այդ շրջանում սպանութիւն, թալան և այլն շարունակվում են։ Պատրիարքական փոխանորդն այդ հեռագիրն ստանալուն պէս դիմել է ներքին գործերի մինիստրին, որից սակայն պատասխան է ստացել, թէ իրան ոչինչ յայտնի չէ այդ մասին։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Լրագրական հսկայ ձեռնարկ մը

Կ. Պոլիս, 27 սեպտեմբեր

Քանի մը ամիսներէ ի վեր կը ծեծուի գաղափարը հսկայ դրամագլխով լրագրի մը, որ պիտի հրատարակուի կեդրոնի լիգէր Դաւիթ Տէր-Մովսէսեանի ղեկավարութեամբ։

Ասկէ առաջ «Հայրենիքի» հրատարակութիւնը ապահովելու համար սահմանադրական-ռամկավար սկզբունքներով արդէն ձեռնարկ մը կատարուած էր, սակայն Յովհաննէս Շահնազար վերջին պահուն դասալիք եղած էր ասպարէզէն՝ հաւանօրէն դաշնակցականներու սպառնալիքին առջև տեղի տալով։

Անկէ ի վեր գաղափարը չէր լքանուած և քանիցս անգամ ծրագիրներ կազմուած էին, ռամկավար սկզբունքներով թերթ մը հիմնելու։

Արդէն Կ. Պոլսոյ մամուլին մէկ կարևոր մասը, առանց պաշտօնապէս օրգանը ըլլալու այս կուսակցութեան, կը ծառայէ նոյն գաղափարին, սակայն Կ. Պոլսոյ թերթերը մեծագոյն մասամբ ըլլալով անհատական ձեռնարկներ՝ անոնց անհատ վարիչները պարտաւորուած են իրենց սեփական հայեացքներն ու անհատական գաղափարները նախընտրել և անհատական հայեացքն աւելի բարձր բռնել, քան հաւաքական գաղափարական հայեացքները։

Հետևաբար կարևոր էր կուսակցական գետնի վրայ գործող երկու թերթերու՝ «Ազատամարտի» (դաշնակցական) և «Նոր-Աշխարհի» (Հնչակեան) դէմ, երբ սահմանադրական-ռամկավար հայեացքներու արտայայտութիւն, կամ աւելի ճիշդը՝ ազգայնական-սահմանադրական-բուրժուազիական դասակարգերու բերան հայ լրագիր մը գոյութիւն ունենար, պաշտպանելու համար միջնակարգ դասակարգին շահերը։

Այս պատճառով Դաւիթ Տէր-Մովսէսեան, աջակցութեամբ Միհրան Մուրադեանի և այլոց, կազմեց 5000 օսմ. ոսկի (40,000 ր.) դրամագլխով բաժնետիրական (աքսիոնէրական) անանուն ընկերութիւն մը, լրագրական հրատարակութեանց համար։

Այս ընկերութիւնը արդէն լոյս տեսնող երկու առաւօտեան թերթերէն «Արևելքը» և «Լուսաբձակը» ծախու առնելով՝ զանոնք իր հաշւոյն հրատարակելու պիտի ձեռնարկէ ի մօտոյ։

Հրատարակելի թերթին անունը պիտի ըլլայ դարձեալ «Արևելք»։ 1884 ին «Արևելք» իր հրատարակութեան սկիզբն ալ այսպէս անանուն ընկերութեան մը ձեռամբ սկսած էր հրատարակուիլ խմբագրութեամբ Արփիար Արփիարեանի և Բիւզանդ Քէչեանի։

«Արևելքի» հրատարակութեան ձեռնարկող ընկերութիւնը 1894-ին լուծուած էր ինքնին։ Հիմա անիկա տարբեր կերպով մը ծնունդ կառնէ, գրեթէ համանման պայմաններու մէջ։

«Արևելք» 1884-ին կը հիմնուէր չափ մը զսպելու համար պատուելիաբոյր լրագրութեան մը ծեքծեքումներուն, որոնք այն ատեն այնքան սովորական դարձած էին լրագրական բարքերու մէջ։ Այն ատեն Ստեփան Փափազեան, Մարկոս Աղաբէգեան, Մինաս Գարամաճեան և այլք, առաջ-դիմեւ կոչուած դասակարգին պատկանողներ, բաւական խոշոր պայքար մը բացած էին մեծ-աղա կոչուած դասակարգին դէմ և աւելի անսանձ ու յախուռն ոգորութիւն մը ընդգրկած էին։ Մինչ ընդհակառակն «Մասիս» և այլ քանի մը թերթեր մեծ-աղաներու բուրվառակիրները դարձած էին և շարունակ կը քծնէին։

Այս երկու ծայրայեղութիւններուն դէմ միանգամայն պայքարելու համար այն ատեն «Արևելք» հիմնուեցաւ։ Հիմա ալ թայֆայական հոսանքներու դէմ պայքարելու համար անիկա վերստին այս տեսակ ընկերութեան մը ձեռքերուն կը յանձնուի։

Գալով «Լուսաբձակին», իր խմբագիրները գերմարդկային ճիգերով միայն կրնային շարունակել թերթին գոյութիւնը, և սակայն արդէն կրցած էին իրենց համար ընթերցողներու որոշ թիւ մը շինել։

Հետևաբար «Լուսաբձակ» «Արևելքի» հետ միանալով անոր կապահովէ իր ընթերցողներն և նոր թերթ՝ զետեղուելու, նոր ընթերցողներու խումբ մը կազմելու հոգէն մասամբ զերծ եղած պիտի ըլլայ։ Կազմակերպութեան մասին ալ ընկերութեան գործը բաւական դիւրին պիտի ըլլայ, վասնզի թերթը պիտի հրատարակուի «Լուսաբձակի» կազմով ու խմբագրութեամբ, միայն աշխատակիցներու շատ զօրաւոր և խնամեալ խումբ մը աւելի ունենալով։

Դաւիթ Տէր-Մովսէսեան այնքան գործին ոգւով վարած է, որ փակած է իր անձնական գրասենեակը և թողած է իրաւաբանական (երդուեալ-հաւատարմատար) գործերը, միմիայն զբաղելու համար թերթին գործերով։

Ասիկա պարզապէս անձնազոհութիւն մըն է, որ ոևէ մարդ չպիտի ուզէր ընել, ազգին ծառայելու համար։

«Արևելքէն» զատ կըսուի թէ «Լուսաբձակ» պիտի հրատարակուի իբր գրական շաբաթաթերթ, և առաջիկային մտադրութիւն կայ հրատարակելու նաև թիւրքերէն լրագիր մը, նպատակ ունենալով հայերը ծանօթացնել թիւրքերուն։

Այս ձեռնարկն, ինքնին պարզ գործ մը, ունի իր նշանակութիւնը, վասնզի ուրանալ թերթին դերը իբր պրօպագանդի և կազմակերպութեան միջոց՝ ուրանալ պիտի ըլլար տարրական ճշմարտութիւնները։

Մինչև հիմա մեր ակնարկած դասակարգերը չէին ունեցած իրենց առաջնորդ մը, և շատ անգամ ասոր համար անհասկցողութիւններ պատահած էին իրենց միջև։

Դարձեալ նշանակելի է, որ կեդրոնը և սահմանադրական-ռամկավարները մինչև հիմա զրկուած էին մամուլով պրօպագանդ ընելու միջոցէն, ինչ որ արհամարհելի միջոց մը չէ գաղափարներու մշակութեան համար։

Այս թերթը միայն իրեն ապաւէն ունենալով այն դասակարգերն, որոնց շահերուն նուիրուած ըլլալ կը թուի, կրնայ պահպանել իր գոյութիւնը։

Սակայն դիտուած երևոյթ մըն է, որ բոլոր այն կուսակցութիւններն, որոնք իրենց սեփական լրագիրն ունենալու ձեռնարկ ըրած են, լրագրական հալածանք հրաւիրած են իրենց վրայ, վասնզի միւս թերթերը կարծած են, թէ անոնք ուղղակի իրենց շահերուն կը սպառնան։

Նոյնը կը վախցուի որ ըլլայ նաև «Արևելքի» համար, որ առաւելապէս կրնայ իր վրայ հրաւիրել զայրոյթը անհատներու հաշւոյն հրատարակուած թերթերուն, քանի որ այս թերթերուն համակիր շրջանակին մէջ գործելու ստիպուած է անիկա և անոնց ընթերցողներուն և ուրիշ շահերուն կրնայ սպառնալ։

Եւ որովհետև ամեն թերթ ունի իր մոլեռանդ հետևողները, Դաւիթ Տէր-Մովսէսեան և իր գործակիցները գերմարդկային ջանքեր ընելու ստիպուած են իրենց դէմ չհանելու համար իրենց համախոհներէն մէկ մասը և ասով թերթը կազմակերպական ուժ մը դարձնելու տեղ՝ կազմալուծման պատճառ մը դարձնելու։

Այս ճարտարութիւնը դժբաղդաբար Դաւիթ Տէր-Մովսէսեանի մինչև հիմա ունեցած գործունէութենէն դատելով՝ հաւանական չէ սպասել իրմէ։

Տէր-Մովսէսեան կորովի, կամքի ու նկարագրի տէր անձնաւորութիւն մըն է, պայքարի մէջ անվհատ, խուժանին առջև տեղի չտուող, սակայն իր մէջը կը պակսի հաւաքական գործունէութեան մը վարիչն ըլլալու ձիրքը և կազմակերպական կարողութիւնը, ինչպէս տեսնուեցաւ, որ 70 անդամէ բաղկացեալ կեդրոնը այսօր իր մեծամասնութիւնը կորուսած է և իջած է 30—40-ի, վասնզի կազմակերպական ուժը պակաս է։

Շաւայլ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 28 սեպտեմբերի

Գրել էր «Մշակում» Ներսէս վ. Մելիք-Թանգեանի ուղարկած հրաժարականը Կաթողիկոսին Ատրպատականի առաջնորդութիւնից և թոյլտուութիւն խնդրելը Վեհից՝ Էջմիածին գնալու և բերանացի զեկուցումներն անելու համար Վեհին։ Վեհափառը նորից հրամայեց Մելիք-Թանգեանին մնալ Թաւրիզ և գրաւոր ուղարկել իր զեկուցումները։ Ներսէս վարդապետը հարկադրված է մնալ Թաւրիզում՝ տալով գրաւորապէս իր զեկուցումները Կաթողիկոսին։ Թէ ինչ կը լինի ընտրութեան հետևանքը, արդեօք Կաթողիկոսը օրինաւոր կը ճանաչէ ընտրութիւնը թէ կը բեկանէ՝ նշանակելով նոր ընտրութիւն թեմական պատգամաւորական ժողովի նոր ընտրութիւնից յետոյ, յայտնի չէ տակաւին։

Ի դէպ, պարտք եմ համարում ուղղել մի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՍՍ ԴՈԼԼԻ

(Անգլիերէնից)

Ուղիղ երեկոյեան ժամը 8-ն էր, երբ Գանֆոր Ֆիլդինգը մտնեց իր տունը։ Ընդամենը 5 օր էր, ինչ նա վերադարձել էր երկարատև ճանապարհորդութիւնից՝ Ասիայից, իսկ այսօր երեկոյեան ժամը 8 և 35 րոպէին նա նորից, «Տրիբունա» լրագրի յանձնարարութեամբ, ուղևորվում է դէպի արևադարձները։

Քիչ առաջ ճաշել էր նա իր բարեկամների հետ և շտապում էր տուն շորերը փոխելու և ապա գնալու կայարան։ Նա մտաւ իր կացարանը, թռուցիկ հայեացք նետեց նրա ներսը և ապա մօտեցաւ իր հինաւուրց, ժառանգական պահարանին։ Բայց դեռ նա չէր մօտեցել պահարանին, երբ վերջինիս դռնակը բացվեց միանգամից և դիպաւ նրա ձեռքին։

— Սա ինչ սատանայ էր,—բացագանչեց ապշած Ֆիլդինգը։

— Կարծում եմ, միստր Ֆիլդինգ, որ իմ հայրենակիցները աւելի քաղաքավարի կը լինէին,—լսվեց մի թովիչ կանացի ձայն թեթև ամերիկական առոգանութեամբ։

Եւ դրանից անմիջապէս յետոյ պահարանից դուրս եկաւ վայելուչ հագնված մի կին, փոքրիկ ատրճանակը ձեռքին բռնած և կիսադիմակը դէմքին ծածկած։

Թող նրա առջև կանգնած լինէր մի սովորական գող, տղամարդ, Ֆիլդինգը կիմանար ինչպէս վարվել. սակայն նրա առջև կանգնել էր մի չքնաղագեղ աղջիկ, և նա շփոթվեց դպրոցական աշակերտի նման։

— Սա ի՞նչ սատանայ է,—ասաց նա նորից։

— Ձեռքերդ վե՛ր,—խստութեամբ հրամայեց աղջիկը, և Ֆիլդինգը, առաջվայ պէս ոչինչ չը հասկանալով, անմիջապէս հնազանդվեց նրա հրամանին։

— Թոյլ տուէք, միսս, իմանալու, թէ ինչ բանի եմ ես պարտական ձեր այցելութիւնը,—սկսեց նա չափազանց քաղաքավարութեամբ։

Աղջիկը ծիծաղեց, բայց նրա ծիծաղը Ֆիլդինգին մի փոքր անբնական թւաց։

— Հանելուկային պատմութիւն է,—հարցրեց աղջիկը։

— Այո,—պատասխանեց Ֆիլդինգը, շարունակելով դիտել իր անակնկալ հիւրին, որը յանկարծ նրան զարմանալի գրաւիչ երևաց։—Չեմ կարծում,—ասաց Ֆիլդինգը ժպտալով,—որ դուք իսկապէս կարողանայիք սպանել ինձ։

— Ի զուր էք կարծում։ Իմ ձեռքը, իհարկէ, մի քիչ դողում է, բայց և այնպէս, հաւատացնում եմ ձեզ, ես շատ լաւ գնդակաձիգ եմ։ Խոստացէք, որ մինչև իմ հեռանալը զանգ չէք տայ...

— Ես ձեր տրամադրութեան տակ եմ. վարվեցէք, ինչպէս կամենում էք, և կարգադրեցէք, ես կանեմ։ Ի դէպ՝ յայտնում եմ, որ իմ կացարանում ոչ զանգ կայ և ոչ էլ մշտական սպասաւոր։ Բայց նախազգուշացնում եմ ձեզ, որ ձեզ համար ես կարող եմ զոհել 5 րոպէ միայն, ոչ աւելի։

— Այդքանը միանգամայն բաւական է։

— Ինչո՞վ կարող եմ ձեզ ծառայել։ Նստեցէք, խնդրեմ։

— Շնորհակալ եմ։ Ուրախութեամբ կը նստեմ։ Ես քիչ էր մնացել որ խեղդվէի ձեր գզուելի պահարանում։ Նրանից սարսափելի ծխախոտահոտ է գալիս։

— Եթէ ես իմանայի, որ իմ պահարանը կարժանանայ ձեզ համար ապաստարան ծառայելու պատւին, հաւատացնում եմ, որ սրանից կէս տարի առաջ կը թողնէի ծխելը։ Եւ նոյնիսկ պահարանս կօծանէի ձեր անուշահոտ իւղերով։ Եթէ չեմ սխալվում, ձեր սիրած բոյրը մանուշակն է,—աւելացրեց Ֆիլդինգը հեգնօրէն, բայց և նուրբ քաղաքավարութեամբ։

Այդ ամբողջ պատմութիւնը սկսում էր զուարճութիւն պատճառել նրան։

— Թոյլ կը տաք ծխել,—դիմեց նրան աղջիկը։

Ֆիլդինգը մեծ հետաքրքրութեամբ հետևում էր, թէ ինչպէս աղջիկը, առանց շտապելու, ծխում էր և աւելի յարմար կերպով նստում աթոռի վրա։ Երևում էր նրա շարժումներից, որ նա ամենևին չէ շտապում։

— Վեհանձնօրէն ներեցէք ինձ, բայց ես ստիպված եմ կրկին յիշեցնելու ձեզ, որ իմ տրամադրութեան տակ կան միայն մի քանի ազատ րոպէներ... Եթէ դուք կամենում էք կատակ անել...

— Շարունակեցէք։

— Ձեր դէմքը բոլորովին հակառակն է ասում։ Չեմ համարձակվում նոյնպէս ենթադրել, որ դուք այդպիսի ամերիկական եղանակ էք ընտրել ինձ ինտերվիւ անելու։ Ես առայժմ այնքան աննշան անձնաւորութիւն եմ, ինձ կարելի է տեսնել և խօսել ամեն տեղ և ամեն ժամանակ...

— Ցոյս ունեմ, որ ես գող կնոջ նմանութիւն չունեմ...

— Ամենևին. մանաւանդ որ ինձ մօտ ոչինչ չը կայ կողոպտելու։

— Կողոպտելու մասին խօսք անգամ չէ կարող լինել,—խստօրէն արտասանեց միսսը։—Ես եկել եմ այստեղ ձեզ համար միայն։

— Կրկնում եմ, որ ես լիովին ձեր տրամադրութեան տակ եմ. պատրաստ եմ ծառայելու ձեզ։ Միայն թէ խնդրում եմ շտապել։ Թոյլ տուէք իմանալ՝ ով էք դուք։

— Ուրուական։

— Ուրուակա՞ն։

Ֆիլդինգը ափսոսանքով նայեց աղջկայ վրա և մտածեց. «Միթէ աննորմալ է։ Անկարելի է»։

Տհաճութիւն զգաց նա։

— Դուք շարունակում էք կատակ անել. այդ դէպքում ես ստիպված եմ խնդրել ձեզ՝ որքան կարելի շուտ թողնէք ինձ։ Ես պէտք է շորերս փոխեմ և շտապեմ կայարան՝ հասնելու ժամը 8 և 35 րոպէին ուղևորվող գնացքին։

— Նստեցէք,—հրամայեց աղջիկը ատրճանակի փողը ուղղելով նրա դէմ։—Երկար չեմ պահի ձեզ։ Դուք այսօր պատրաստվում էք Համբուրգ ուղևորվելու։

— Ես այսօր գնում եմ Համբուրգ,—ուղղեց Ֆիլդինգը։

— Չէք գնայ։

— Ինչ ասացիք։

— Ձեր բացակայութիւնը ամենևին էլ չի ազդի էքսպեդիցիայի հետևանքների վրա։

— Բայց ինձ ուղարկում է այն թերթը, որի համար չափազանց կարևոր է թղթակցութիւններ ունենալ ճանապարհից...

— Ձեզ յայտնի է, որ «Տրիբունայի» խմբագրութեան կողմից սկզբում նշանակված էր մի ինչ-որ Զարլզ Վեր, որ շատ տաղանդաւոր մարդ էր, որը մեծ աջողութեամբ կարող էր փոխարինել ձեզ։

— Կարող է պատահել։

— Շնորհիւ ձեր վաղաժամ վերադարձի Թեհրանից՝ Վերը հեռացվեց։ Դուք, նշանակում է, նրան խանգարեցիք։ Եւ այդ պատճառով էլ անմիջապէս պէտք է հեռախօսով յայտնէք խմբագրութեանը, որ այլ ևս չէք գնում։

— Այդպիսի բան երբէք չեմ անի։

— Ես Զարլզ Վերի նշանածն եմ և պահանջում եմ ձեզանից կատարել այդ։ Դուք նրա ապագան կործանում էք։ Այդ էքսպեդիցիայում նա կարող էր աչքի ընկնել։

— Այդ ինձ չէ վերաբերում։ Միստր Վերը ինձ համար մի դատարկ հնչիւն է և օգնել նրան ի հաշիւ ինձ՝ ես մտադիր չեմ։ Ներեցէք, ես շտապում եմ...

Աղջիկը պատասխանելու փոխարէն՝ վեր թռաւ աթոռի վրայից, և մինչ Ֆիլդինգը կը գուշակէր նրա դիտաւորութիւնը, կրակեց դէմ առ դէմ. Ֆիլդինգը երերվեց ու ընկաւ բազկաթոռի վրա։ Աղջիկը, ամբողջովին դողալով, մի րոպէ յապաղեց, բայց յետոյ իսկոյն դուրս վազեց սենեակից, իր ետևից դուռը կողպեց ու սկսեց հեռախօսով խօսել մէկի հետ։

Մի քանի րոպէից յետոյ վերադառնալով այն սենեակը, ուր անշարժ դրութեամբ ընկած էր Ֆիլդինգը, նա մօտեցաւ հագուստեղէնի պահարանին և հանեց այնտեղից իր մորթէ ժակէտը։ Ցետոյ մօտեցաւ գրասխալ, որ տեղի էր ունեցել իմ նախորդ թղթակցութեան մէջ՝ Ներսէս վարդապետի ընտրութեան առիթով։

Պատգամաւորական ժողովին ներկայ եղողները եղել են ոչ թէ 12, այլ 14 հոգի, և ռուս. հիւպատոսարանում ապաստան գտածների ձայնը 4 և ոչ թէ 6, ինչպէս թիւրիմացութեամբ սպրդել էր թղթակցութեանս մէջ։

Մելիք-Թանգեանը, ըստ երևոյթին, սպասում է Կաթողիկոսի կարգադրութեանը՝ տրուած զեկուցումներից յետոյ։ Հայր-սուրբը սակայն անգործ չէ, կամենում է գործ շինել։ Նա ձեռնարկեց նորից կազմակերպելու Թաւրիզի երբեմնի խիստ հռչակաւոր Կանանց Բարեգ. Միացեալ Ընկերութիւնը, որն անցեալում խիստ փայլուն գործունէութիւն էր ունեցել և որը շնորհիւ Թայֆայականների ոտնձգութեան և ժամանակաւոր աջողութեան, ընկել էր նրանց անարգ ճանկը և բառի բուն իմաստով հասել այն վիճակին, որ այսօր գլխովին կազմալուծված է ու չքացած։ Մելիք-Թանգեանի ջանքերը միանգամայն գովելի են, եթէ գտնեն ցանկալի աջողութիւն։ Մնում է, որ յարգելի տիկինները սիրով պատասխանեն հայր սուրբի կոչին և, ձեռք ձեռքի տուած, առանց կուսակցական նկատառումների, վերակենդանացնեն ընկերութիւնը և գործեն նախկին եռանդով ու կորովով։

Ներսէս վ. այցելում է ուսումնարանները և ներկայ լինում ուսուցիչների դասախօսութիւններին։

Նախանցեալ տարի, Կարապետ եպիսկոպոսի օրով, պատգ. ժողովի կողմից ընտրվել էր մի յանձնախումբ՝ թեմական կանոնադրութեան կրթական մասի յարաբերութիւններն ու կանոնները ճշդելու և կրթական ընդհանուր ծրագիր մշակել և պատգ. ժողովի հաւանութեանը ներկայացնելու համար։ Առաջին մասը՝ ժողովների ու մարմինների յարաբերութեանց և իրաւասութեանց հարցերը մշակել էր, բայց դպրոցական ծրագիրը մնացել անմշակ։ Այս անգամ Մելիք-Թանգեանցի հրաւէրով յիշեալ յանձնաժողովը կատարելու է աշխատանքները՝ մշակելով երկրի պահանջներին համապատասխան ծրագիր օգուտ քաղելով Կովկասի թեմական դպրոցների, առաւելապէս Ներսիսեան դպրոցի արդէն գոյութիւն ունեցող ծրագիրներից։

Մաղթում ենք աջողութիւն յանձնաժողովի աշխատանքներին։ Հայկազուն

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱ-ՔԻՒՐԴԻՍՏԱՆՈՒՄ *)

IV

Միրզա-Ֆաթթահ-ղաղին վերջին տարիներում, այն օրվանից՝ երբ գահընկեց եղաւ Մամէդ-Ալի շահը, ամբողջ Քիւրդստանում գրաւել էր որոշ դիրք և դրական ազդեցութիւն էր ձեռք բերել. նրա ամեն մի խօսքն ու վճիռը ընդունվում էր թէ աղայանների և թէ Սօուջ-Բուլաղի ազդեցիկ անձերի կողմից յակեյան. նոյնիսկ սարդարն ու Ըլ-խանին ընդունում էին նրա հեղինակութիւնը և գանցառութեան տալիս նրա շատ անգամ ապօրինի ընթացքը։ Նա այն աստիճան զօրացել էր իր աջողութիւններով, որ մի ինչ-որ սահմանային թեթև վէճի առիթով սպանել տուեց Մաջիդ-բէկ անունով մի կալուածատիրոջ և նրա 3 ծառաներին, որի համար ոչ մի պատասխանատուութեան չենթարկվեց։ Հետզհետէ խրախուսվելով՝ նա յանդգնութիւն ունեցաւ ապօրինի կերպով գրաւել և սեփականացնել անգլիահպատակ մօսիօ-Այծակ-բէկի Հաջիաբադ և Քիլաբադ գիւղերը։ Նոյնիսկ ձեռք մեկնեց Բասիր-Սալթանէի կալուածքների վրա և նրա Դալմա ու Գեօզջալի գիւղերի եկամուտները գրաւեց. և այնուհետև սկսեց իշխանավայել նիստ ու կաց և զանազան ոտնձգութիւններ անել դէպի ուրիշի գոյքերը սեփականացնելու գործում։ Քիւրդստանը տեսնում էր այդ բոլորը և լռում։ Լռում էր, որովհետև ճար չունէր. իսկ երկու շէֆերը, սարդարն ու Ըլ-խանին, աչքաթող էին անում նրա անվայել ու ապօրինի գործերը։ Սակայն ամեն ինչ իր վախճանն ունի. ամեն մի բռնութիւն և զրկանք իր սահմանն ունի։ Երբ ղաղի Ֆաթթահը հպարտացած իր դիրքով և անարգել գրաւումներով իր տասնեակ ձիաւորներով գնաց ու միացաւ Շուջա-ուդ-Դովլէի բանակին, այդ ժամանակ վարագոյրը պատռվեց, և սարդարն ու Ըլ-խանին տեսան, որ իրանք չարաչար խաբված են եղել նոյնիսկ ղաղի Ֆաթթահի կողմից. և հէնց այդտեղից էլ սկսվեց դրանց թշնամական յարաբերութիւնը։ Ղաղիի մեկնելուց մի 20 օր յետոյ Ըլ-խանիի հրամանով եկան և նստեցին ղաղիի Ղանիջա գիւղում յայտնի Աղեղ-աղան և միրզա Բաշիրը, որոնք սկսեցին կողոպտել և աւերել գիւղն ու գրաւել ամբողջ եկամուտը. նաև գրաւեցին Այծակ-բէկի գիւղերի եկամուտը, որոնց տիրապետել էր ղաղին երկու տարիներից ի վեր, և որպէս սեփականատէր՝ նստեցին ղաղիի սեփական և գրաւած գիւղերի վրա։ Միւս կողմից սարդարն ու Ըլ-խանին յարաբերութեան մէջ մտնելով Թէհրանի կառավարութեան հետ՝ պատրաստութիւններ էին տեսնում իրանց զօրքով արշաւել Շուջա-ուդ-Դովլէի բանակի վրա։ Այդ պատրաստութիւնները շատ երկար ժամանակ ձգձգվեցին։ Ընդհանուր երկիւղի տակ Միանդաբի շրջանի պարսիկ ազգաբնակութիւնը սկսեց քոչել և կենտրոնանալ Մարաղայում։ Շուջա-ուդ-Դովլէն այս անգամ սկսեց լուրջ երկիւղ կրել Քիւրդստանի շարժումներից և շտապով Քիւրդստան ուղարկեց Բաշիր-Միւլքին, որը քաջ ծանօթ է Քիւրդստանին և աղայանների բնաւորութեան և, որ գլխաւորն է, խնամիական կապեր ունի սարդար-Մուքրիի հետ։ Բաշիր-Միւլքը մօտ 200 ձիաւորներով տեսակցութիւն ունեցաւ սարդարի հետ նրա սեփական Բօքան գիւղաքաղաքում. Ըլ-խանիի համար անախորժ էր այդ տեսակցութիւնը, ուստի առաջարկեց սարդարին, որ 24 ժամվայ ընթացքում դուրս վռնդէ Բաշիր-Միւլքին, եթէ չէ ուզում, որ յարձակվի Բօքանի վրա ու կախաղան հանէ Բաշիր-Միւլքին։ Սարդարը նկատելով հետևանքի լրջութիւնը՝ Բաշիր-Միւլքին յետ ճանապարհեց Թաւրիզ. բայց թէ ինչ խորհրդակցութիւն տեղի ունեցաւ այդ երկուսի միջև, յայտնի չեղաւ. միայն այսքանը յայտնի եղաւ, որ այն օրից սկսած՝ սարդար-Մուքրին յետ կանգնեց Շուջա-ուդ-Դովլէի վրա արշաւելու մտքից, որով Ըլ-խանին մենակ մնալով՝ սկսվեց մի տեսակ սառն յարաբերութիւն Քիւրդստանի այդ երկու շէֆերի միջև։

Մինչ այդ բոլորը կատարվում էր երկրի զանազան խաւերում մահմեդական աշխարհի «եաւաշ-եաւաշ»-ութեան օրէնքով, վրա հասան դեկտեմբերեան աղէտալի դէպքերը, որով միանգամայն խորտակվեց Պարսկաստանի յեղափոխութեան գործը և ըմբոստ տարրերը դադարեցրին իրանց գործելակերպը. Նրանցից ոմանք հնարաւորութիւն ունեցան մէջ տեղից դուրս գալու, ոմանք մահվան դատապարտվեցին, իսկ Քիւրդստանը կենտրոնացաւ իր մէջ և մնաց լուռ ականատես կատարվող իրողութեանց և սպասեց իրերի հետևանքներին։ Շուջա-ուդ-Դովլէն մտաւ Թաւրիզ և արժանացաւ իր փափագին, որի համար այնքան յամառ կռիւներ մղեց։ Ղաղի Ֆաթթահը՝ որպէս յաղթականներից մէկը՝ իր ուղեկիցներով և ծառաներով վերադարձաւ Սօուջ-Բուլաղ՝ ծանրաբեռնված յոյսերով, թէ իր վնասների քառապատիկն է ստանալու Ըլ-խանիից։ Սակայն հէնց Սօուջ-Բուլաղ հասնելու օրը նա հիասթափվեց՝ հանդիպելով Ըլ-խանիի հեգնութեան և արհամարհանքին. Ըլ-խանին նոյն հպարտ և զօրեղ անձնաւորութիւնն էր, ինչ որ դեկտեմբերեան դէպքերից առաջ։ Այդ օրերում ղաղի Ֆաթթահին պատահեց մի դժբաղդութիւն. իր հասած օրը ծառաներից մէկը պատահում է միրզա Բաշիրի եղբօրը, որը գրաւել էր ղաղիի կալուածքները և նստել որպէս սեփականատէր. երկուսն էլ մենակ հանդիպում են իրար, և խօսքի գալով՝ ղաղիի ծառան հրացանի մի հարուածով սպանում է միրզա Բաշիրի եղբօրը՝ Սահզուն աղային։ Այդ սպանութիւնը ևս մի առիթ է ծառայում, որ ղաղին կրկնակի թալանվում է Ըլ-խանիի կողմից և միանգամայն ընչազուրկ դառնում։

Ղաղիի յոյսերը միանգամայն խորտակվում են, Շուջա-ուդ-Դովլէն դրական մի բան չէ կարողանում անել յօգուտ ղաղի Ֆաթթահի. նա քանիցս անգամ հեռագրով հրամաններ է ուղարկում դատաւոր սարդար Մուքրիին, որ Ըլ-խանիից ղաղիի վնասները առնէ. բայց ծով է լսում սարդարին։ Դրութիւնը այս կերպ մնում է մինչև Սիփէհդար-Ազամի Ատրպատական գալու օրերը. այդ հանգամանքի ազդեցութեան տակ՝ Ըլ-խանին նորից շարժվում է, այս անգամ էլի ղաղի Ֆաթթահից սկսելով, որին «զօրս դու պատուիրեցեր» միանգամայն փետրում է....

Սիփէհդարը Վասպինջ հասնելու օրը առաջին բողոքը ստանում է ղաղի Ֆաթթահից, որը մանրամասն դեկուցանելով իր դրութիւնն ու կրած վնասները՝ արդար հատուցում է խնդրում։ Սիփէհդարը երկու անգամ հեռագրով հրամայում է սարդարին, որ Ըլ-խանին գոհացնէ տայ ղաղի Ֆաթթահին, բայց ի զուր. Ըլ-խանին նոյնիսկ արհամարհում է Սիփէհդարի հրամանները. ահա այդ պատճառով է, որ Թաւրիզից շարժվում է յիշածս հազարանոց զօրաբանակը։ Իսկ թէ ինչ է Քիւրդստանի ներկայ դրութիւնը և Ըլ-խանիի նպատակները, մենք ցոյց կը տանք յաջորդ գլխում։ Տուրքիզ

---

*) Տես «Մշակ» № 219.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ԵՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ*)

Մոսկվա, 20 սեպտեմբերի

Այսօր, սեպտ. 20-ին, այստեղ Մոսկվայում բացվեց ոչխարաբուծութեան համառուսական ցուցահանդէսը, որտեղ Կովկասը ունի իր բաւական մեծ և ճոխ բաժինը։

Ցուցահանդէսը բացեց երկրագործութեան նախկին մինիստր Ա. Երմոլովը, որը իր ճառի մէջ պարզեց ցուցահանդէսի նախապատրաստական հանգամանքների և նրա կատարելիք դերի մասին։

Երմոլովը ընդգծեց, որ նորագոյն անտեսական պայմանները թելադրում են փոխել ոչխարաբուծութեան հնագոյն եղանակները և իւրացնել տնտեսութեան նոր ձևեր։

Ցուցահանդէսը ընդարձակ է։ Նա աւելի հարուստ և խոշոր է, քան սպասում էին նրա կազմակերպողները։ Նա պարունակում է մինչև 1800 գլուխ ոչխար և այծ, որոնք բերված են կայսրութեան բոլոր մասերից։

Կազմակերպիչ մասնաժողովի հրաւէրին արձագանք են տուել թէ Եւրոպական Ռուսաստանը և թէ հարաւն ու արևելքը։ Կան ոչխարներ Կովկասից, Անդրկասպեան երկրից, Թուրքեստանից, Բուխարայից, Սիբերից։

Նորութիւններ կան թէ գիտնականների և թէ գործնական մարդկանց համար։ Գիտնականները գաղափար չունէին ոչխարների այն բազմաթիւ տեսակների մասին, որոնք գոյութիւն ունեն Ռուսաստանում, և այն արդիւնաբերական նիւթի մասին, որը սպասում է ձեռնարկու նախաձեռնութեան ժողովրդական հարստութեան նոր ճիւղ բանալու համար։

Բոլորը զարմացել են, տեսնելով, որ Կովկասի նման մի երկրում դարերից ի վեր ապրում են քսանից աւելի տեսակի ոչխարներ և այծեր։

Եւ կովկասեան բաժինը, արդարև, արժանի է յատուկ ուշադրութեան։ Անդրկովկասից և Հիւսիսային Կովկասից ներկայացված են 200-ից աւելի կենդանիներ, բաժանված խմբերի իրանց մականուններով։ Հանդէս է դրված մի յատուկ քարտէզ, որը ցոյց է տալիս ոչխարների տեսակների դասաւորումը Կովկասում, բացի այդ՝ մի քանի հետաքրքրական աղիւսակներ, որոնք տեղեկութիւն են տալիս ոչխարների թւի մասին Կովկասում, ոչխարի և այծի կաթի բաղադրութեան, բրդի յատկութեան, պանրի բաղադրութեան մասին և այլն։

Ցուցահանդէսում բաւական մեծ և պատւաւոր տեղ են բռնում նրբահեր բուրդ ունեցող ոչխարի տեսակներ, մերինօսներ, բացի այդ անգլիական մաքուր խոշորամարմին ոչխարներ, օրինակ՝ Օկսֆորդշիրդաուն, Հեմփշիրդաուն և այլն։

Կովկասից եկած մասնագէտները և ոչխարատէրերը երէկ և այսօր ունեցան երկու ժողով, որտեղ քննութեան ենթարկեցին կովկասեան ոչխարապահութեան մի շարք խնդիրներ և նախապատրաստվեցին համագումարի համար, որը պէտք է բացվի կիրակի օրը, սեպտեմբերի 23-ին։

Ա. Քալանթար

---

*) Ներկայ թղթակցութիւնը ուշ հասաւ մեր ձեռքը։ Խմբ.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ինչպէս յայտնի է, հոկտեմբերի 3-ին կայացան Թիֆլիսի ընդհանուր կուրիայի պատուիրակային ընտրութիւնները, որոնց հետևանքը, ինչպէս երէկ տեղեկացանք, հետևեալն է.

I բաժանմունք.—Մասնակցել են 1115 հոգի, որոնցից անվաւեր են ճանաչվել 104 հոգու ձայները։ Ընտրված են՝ Չխէիձէ 771 ձայնով, Ա. Բաբեան՝ 768 ձ.—ձախակողմեաններ։

II բաժանմունք.—Մասնակցել են 1381, անվաւեր են ճանաչվել 124։ Ընտրված են՝ Գագլօյեվ, Բէբուրիշվիլի և Յարութինեան 836-ական ձայներով—ձախակողմեաններ։

III բաժանմունք.—Մասնակցել են 1172 հ., անվաւեր են ճանաչվել 84։ Ընտրութեան հետևանքի մասին կը հաղորդենք վաղը։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ

Շուշի, 2 հոկտեմբերի

Այսօր Շուշու քաղաքային դումայում նշանակված է ընտրութիւնը այն պատուիրակի, որ իբրև ներկայացուցիչ Շուշու քաղաքի հայ և մուսուլման ազգաբնակութեան՝ պէտք է մասնակցէ Գանձակում տեղի ունենալիք այն ժողովին, որ պէտք է ընտրէ Պետական Դումայի համար մի հայ և մի թուրք անդամ երեք նահանգների (Գանձակի, Երևանի և Բագուի) կողմից։

Չը նայելով որ Շուշին մեր գաւառական մեծ քաղաքներից մինն է և ունի մօտ 25,000 ազգաբնակութիւն (հայ և թուրք), բայց յունիսի 3-ի օրէնքով նա իրաւունք ունի ընտրել միայն մի պատուիրակ։

Ընտրողական ցուցակի մէջ մտցվել են միայն 1680 ընտրողներ, իբրև ցենզ ունեցողներ, որից 1000-ը հայ, մնացածը թուրք։ Հայերը ունեն ձայների $^{2}/_{3}$-ը։ Անկասկած, ընտրողների թիւը աւելի մեծ կը լինէր, եթէ բնակիչները վաղօրօք հոգս տարած լինէին մտցնել տալ իրանց անունները ընտրողական ցուցակների մէջ, վճարելով յատուկ տուրքերը, յայտնելով իրանց բնակչութիւնը և այլն։ Սակայն ոչ ոք չէ հետաքրքրվել Պետական Դումայի ընտրութիւններով, և քաղաքային դուման կարողացել է կազմել միայն 1680 ընտրողների ցուցակ։

Այն հանգամանքը, որ Շուշի քաղաքը, որի ազգաբնակութիւնը բաղկացած է հայերից և թուրքերից, տալիս է Պետական Դումայի ընտրութիւնների համար միայն մի պատուիրակ, առաջ է բերում միշտ թիւրիմացութիւններ հայ և թուրք տարրերի միջև։ Հայերը, որոնք կազմում են ընտրողների $^{2}/_{3}$-ական մասը, բնականաբար, կամենում են, որ պատուիրակը հայ լինի. թուրքերը, որոնք հայերի թւից մի քիչ փոքր են, նոյնպէս բնականաբար, կամենում են, որ պատուիրակը թուրք լինի։ Եթէ երկու տարրերի միջև չէ կայանում համերաշխութիւն և համաձայնութիւն, ձայները բաժանվում են և երբեմն հայերն են յաղթող հանդիսանում, երբեմն թուրքերը, նայելով թէ որ կողմից աւելի շատ թւով ընտրողներ են գալիս և տալիս իրանց քուէները։ Անցեալ՝ 3-րդ Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ 1907 թ. թուրքերը և հայերը համերաշխութիւն կայացրին և իրանց քուէները կենտրոնացրին Հ. Առաքելեանի վրա, իբրև մի անձի, որ, նախ, շուշեցի է, ծանօթ Շուշի քաղաքի և Ղարաբաղի ցաւերին, կարիքներին և դրութեանը. երկրորդ, ծանօթ մուսուլմանական աշխարհին։ Այս անգամ ևս, նախապատրաստական և խորհրդակցական ժողովում, երբ հայերը առաջարկեցին Հ. Առաքելեանի կանդիդատութիւնը, երկու թուրք ինտելիգենտ անձինք, այն է՝ դօկ. Ղասըմ-բէկ Մեխմանդարօվը և ձայնաւոր Խուդադ Ղուլիեվը, երկու հեղինակաւոր և ազդեցիկ անձինք մուսուլման հասարակութեան մէջ, յայտնեցին, որ թուրքերի մի որոշ մասի կողմից պատրաստ են պաշտպանելու Հ. Առաքելեանի ընտրութիւնը։

Սակայն մուսուլմանների մի մասը առաջարկեց կալուածատէր Ղասըմ-բէկ Վեզիրովի կանդիդատութիւնը։

Այսօր, առաւօտեան ժամը 9-ից սկսած, քաղաքային դումայի դահլիճում, նախագահութեամբ քաղաքագլուխ Գ. Քալանթարեանի, տեղի է ունենում պատուիրակի ընտրութիւնը թերթիկներով։ Պայքարը 2 կանդիդատների վրա է՝ Հ. Առաքելեանի և Ղ. Վեզիրովի։

Հետևանքը կը յայտնեմ հեռագրով։

Ա. Խ.

—

(Հեռագրով)

Շուշի, 3 հոկտեմբերի

Հայ և թուրք ընտրողների ճնշող մեծամասնութեամբ Շուշի քաղաքի պատուիրակ ընտրվեց Հ. Առաքելեան։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴ

Կաթողիկոսական դիւանապետ Բագրատ վարդապետ Էջմիածնից հեռագրում է մեզ հետևեալը.

Նորին Պայծառափայլութիւն փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովը, Նորին Սրբութեան միջնորդութեան համաձայն, թոյլատրել է մի տարով հանգանակութիւն բանալ հայոց եկեղեցական-ծխական դպրոցների օգտին ֆոնդ կազմակերպելու համար։

սեղանին և գրեց մի համառօտ տոմսակ հետևեալ բովանդակութեամբ.

«Ներողութիւն եմ խնդրում, յարգելի միստեր Ֆիլզինգ, ձեզ անախորժութիւն պատճառելու համար։ Դէպի Զարլզ Վերը տածած սիրուցս դրդված՝ ես վճռեցի այդ քայլն անել։ Հեռախօսով յայտնեցի «Տրիբունայի» ձեր յանկարծակի հիւանդանալու մասին և հէնց ձեր անունից էլ խնդրեցի թղթակից ուղարկել Զարլզ Վերին, որը կը միանայ Համբուրգ գնացող էքսպեդիցիային։

«Դուք, ի հարկէ, հասկանում էք այժմ, որ ես ամենևին նպատակ էլ չեմ ունեցել ձեզ սպանելու։ Իմ դիտաւորութիւնս է եղել միայն ժամանակաւորապէս խլացնել ձեզ։ Ցաւում եմ, որ այդ բանը ինձ միանգամայն յաջողվեց։ Բանալին թողնում եմ դռան վրա դրսից։ Երբ ուշքի կը գաք, հեռախօսով խնդրեցէք մէկին, որ գան ձեզ դուրս թողնեն»։

Աւարտելով նամակը, նա քաշեց գրասեղանը Ֆիլզինգին մօտիկ և դրեց տոմսակը ամենաաչքի ընկնող տեղում։ Դէպի Ֆիլզինգն ունեցած ուշադրութեան համար և, որպէսզի ծուխը ցրվի, նա բաց արեց պատուհանը. ապա ուղղեց իր ժակէտը, գլխարկը, հայեացք ձգեց իր զոհի վրա և անվրդով կերպով դուրս եկաւ սենեակից։

Դեռ նոր էր դադարել հեռացող աւտօմօբիլի աղմուկը, երբ Ֆիլզինգը ուշքի եկաւ։ Մի առժամանակ նա անզգայաբար նայում էր գրասեղանին, յետոյ գլուխը շուռ տուեց և նկատեց հանդերձեղէնի բաց դուռը։

Կայծակի նման նրա առջև փայլատակեցին երեկոյեան անցքերը։ Առաջին գործն եղաւ մի բաժակ ջուր խմել, ապա կարդաց տոմսակն ու նայեց ժամացոյցին։

«Ութից արդէն անցել էր քսան ու չորս րոպէ»...

Եթէ անյապաղ դուրս գայ տնից, նա կարող է հասնել գնացքին։ Հեռախօսով յայտնելը երկար կը տևի։ Կոտրել դուռը անկարելի է։

Նա մօտեցաւ բաց պատուհանին և աղաղակեց, որքան ոյժ ունէր.

— Պօլիսմէն*)։

Փողոցային ժխորի մէջ անլսելի մնաց նրա աղաղակը։ Այն ժամանակ Ֆիլզինգը վեր առաւ սեղանի վրայից ճենապակեայ լուցկիի ամանը և նետեց փողոցի մայթի վրա, մօտիկ այն տեղին, ուր կանգնած էր պօլիսմէնը։ Վերջինս գլուխը վեր բարձրացրեց ու մօտեցաւ տանը։

— Ի՞նչ էք կամենում, սըր *),—հարցրեց նա։

Ֆիլզինգը բացատրեց նրան, որ բոլորովին պատահաբար նա մնացել է փակված իր կացարանի մէջ և խնդրում է դուրս թողնել իրան։

Նա արդէն հագել էր իր վերարկուն և դրել գլխարկը, երբ պօլիսմէնը բաց արեց դուռը։ Դնելով մի քանի մանր դրամ իր ազատարարի ձեռքում, նա անյայտացաւ առաջ՝ քան պօլիսմէնը գլխի կընկնէր, որ այստեղ ինչ-որ խորհրդաւոր պատմութիւն է տեղի ունեցել։

Ֆիլզինգը հէնց նոր էր նստել վագօնում, երբ լսվեց վերջին սուլոցը։

Այժմ, մենակ մնալով, նա նորից մտաբերեց երեկոյեան պատահարի բոլոր մանրամասնութիւնները և ամենից աւելի ափսոսանք զգաց, թէ ինչու լաւ չը դիտեց աբեսսինիա աղջկայ դէմքը։

Անպայման նա ամերիկուհի է։

Եւ առաւել ևս անպայման՝ նա սքանչելի է։ Գեղանի, անբասիր կազմուածք... Նազելի ու քնքոյշ բերանի գիծը... կաշին նուրբ... ձայնը զմայլելի։

Վերջին կայանից շատ յետոյ Ֆիլզինգը արդէն ափսոսում էր, որ կարողացաւ հասնել գնացքին։ Կասկածից դուրս էր, որ անծանօթ աղջիկը հետևեալ օրը որևէ կերպով իմաց կը տար իր ով լինելը, տեղեկութիւն կը հարցնէր իր առողջութեան մասին...

«Ափսոս։ Նշանածը մի կողմ մնայ, իսկ...»։

Նախ քան շոգենաւ տեղափոխվելը, Ֆիլզինգը հեռագրեց «Տրիբունայի» խմբագրութեանը, որ իր հիւանդութեան մասին տրված լուրը սուտ է և որ ինքը գտնվում է Համբուրգի ճանապարհին։

⁂

Ֆիլզինգը դուրս եկաւ շոգենաւի տախտակամածը։ Պարզ լուսնկայ գիշեր էր, և այնքան լուսաւոր, որ կարծես ցերեկ լինէր։ Երբեմն ալիքները ծփանքով ուռչում էին ու գալարվելով թաւալվում հեռու, շատ հեռու. և մի ինչ-որ տեղ արագ թափով գրոհ տալիս շոգենաւի վրա ու խուլ աղմուկով փշրվում նրա կողերին զարնվելով։

Ֆիլզինգը, շարունակելով մտածել խորհրդաւոր անծանօթուհու մասին, երկար ժամանակ անցուդարձ էր անում տախտակամածի վրա։ Յանկարծ նա ցուրտ զգաց, և այն ժամանակ միայն նա հասկացաւ, որ շատ ուշ է, ու գնաց իր կայուտը։

Սալօնի դռան մօտ նա ընդհարվեց մէկին։

— Ներեցէք։

— Ես եմ մեղաւորը... Օ՛,—այդ բացականչութիւնը դուրս թռաւ բոլորովին ակամայից՝ մորթէ ժակէտ հագած և բարձր մորթէ գդակ դրած մի աղջկայ բերնից։

Տարուբերվող լամպիկների լոյսի շողքը յանկարծ ընկաւ նրա վրա, և Ֆիլզինգը ամեն ինչ հասկացաւ։

Նա մտաբերեց մօտ ժամանակներս մի լրագրի լուրերի բաժնում կարդացած հետևեալ փոքրիկ նկատողութիւնը.

«Միսս Դօլլի Դեկստերը, որ գրում է «Զարլզ Վեր» ծածկանունով և շատ լաւ ուսումնասիրել է Արևմտեան Աֆրիկան, ներկայումս մտադիր է մասնակցել այն էքսպեդիցիային, որը...»։

Այդ նկատողութիւնը ինչ-որ պատճառով իր վրա գրաւեց Ֆիլզինգի ուշադրութիւնը և նա կարողացաւ մոռացութեան տալ նրան նախորդ օրը միայն, այն գրգռված դրութեան շնորհիւ, որի մէջ նա գտնվում էր ուղևորվելուց մի ժամ առաջ։

«Գլխաւոր արգելքը շնորհալի կին գրողի համար կանացի սեռին պատկանելն է հանդիսանում...»։

Նրա առջև կանգնել էր Զարլզ Վերը. Ֆիլզինգը այլ ևս մի վայրկեան անգամ չէր կասկածում։ Մի անգամից նա իրան լաւ զգաց, կարծես ամայի, անբնակ կղզու վրա նա գտել էր իր ամենալաւ ընկերոջը։

Նա ժպտաց, նկատելով որ աղջիկը ևս ճանաչեց իրան։

— Ի՞նչպէս աջողվեց ձեզ հասնել գնացքին,—հարցրեց երիտասարդ աղջիկը։

— Աստուած օգնեց,—ասաց Ֆիլզինգը և նորից ժպտաց։

— Ինչո՞ւ էք ժպտում։ Եթէ դուք իմանայիք բոլոր իրողութիւնը, չէիք ժպտայ։

— Ես գիտեմ բոլորը։

— Բոլո՞րը։ Բայց եթէ դուք կարծում էք, թէ ես այդ բոլորը կատարել եմ փեսացուիս համար, ուրեմն սխալվում էք։ Ես Զարլզ Վերն եմ։

— Գիտեմ։

— Գիտէ՞ք,—աղջիկը գլուխը խոնարհեց։—Նշանակում է մերձակայ կայանում ես պէտք է ափ իջնեմ։

— Այդ դէպքում ես էլ կիջնեմ ձեզ հետ միասին։

— Ինչո՞ւ։

— Որովհետև առանց ձեզ ես չեմ գնայ այդ անպիտան Աֆրիկան։ Ես կը խնդրէի ձեզ լաւ կշռադատել։ Դուք համաձայն էք, որ «Տրիբունայի» թղթակցութիւնները անհրաժեշտ են։

— Այո։

— Եթէ համաձայն էք և, միևնոյն ժամանակ, եթէ ձեզ համար թանգ արժեն լրագրի և ընթերցողների շահերը, դուք կը կատարէք այդ ճանապարհորդութիւնն ինձ հետ միասին։ Կամ մենք երկուսով միասին կը գնանք, կամ երկուսս էլ կը մնանք։ Ուրիշ ելք չը կայ։ Վճռեցէք։

— Ես վճռեցի,—ասաց Զարլզ Վերը և պարզեց իր փոքրիկ ձեռը, որը ջերմագին սեղմեց Ֆիլզինգը։

Լ. Դանիէլեան

---

*) Պօլիսմէն—ոստիկան։

*) Սըր—պարոն։

ՄԻՒՌՈՆՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Էջմիածին, 30 սեպտեմբերի

Այսօր, առաւօտեան ժամը 9-ին, Թիֆլիսի կուսանաց մենաստանի այստեղ ուխտ եկած կոյսերը իրանց մայրապետի առաջնորդութեամբ մտան տաճարը և զգեստաւորվելով՝ բարձրացան բեմը ու համբուրելով միւռոնի կաթսան՝ շարվեցին բեմի երկու կողմը։

Այս կոյսերի հագած ժամաշապիկները՝ ծաղկանկար և գեղեցիկ ուրարներով, ինչպէս և նրանց գլխի սպիտակ շղարշները, ծաղկեայ քօղերը՝ ծածկված գոյնզգոյն նկարներով և զարդուզարդարանքները—ոչ-Թիֆլիսցի ուխտաւոր հասարակութեան համար բոլորովին չը տեսնված նորութիւն էին ներկայացնում, որովհետև ամբողջ Ռուսաստանի հայոց Թեմերում այսպիսի զարդարանքներով զարդարված կոյսեր միմիայն գոյութիւն ունեն իշխան Բէհբութեանների՝ Թիֆլիսում հիմնած կուսանաց մենաստանում։

Եպիսկոպոսները ժողովվել էին վեհարան՝ զգեստաւորվելու։

Ուղիղ ժամը 10-ին սկսվեց հանդիսաւոր գնացքը վեհարանից դէպի տաճարը՝ Վեհ. Հայրապետի գլխաւորութեամբ, խաչախաչվառով, վառված լապտերներով երկկարգ և բոլոր եպիսկոպոսներն զգեստաւորված ու իրանց ձեռքերում մասունքները բռնած, հետևեալ կարգով։

Առաջից գնում էին խաչվառակիրները, լապտերակիրները և խաչակիրները, որոնց յետևից դպիրները։ Յետոյ երկու կարմրազգեստ շաթիրներն իրանց պատմական ցուպերով։ Ապա հայրապետական խաչն ու գաւազանակիր երկու վարդապետները։ Հոգևորական դասը—վարդապետներ ու քահանաներ—շուրջառներով զգեստաւորված։ Աջ կողմից գնում էին Խորէն եպիսկոպոսը՝ ձեռքին բռնած Աւետարանը, Կարապետ եպ.՝ միւռոնի նիւթերի անօթը, Աշոտ եպ.՝ Սրբատակէս հայրապետի աջը, Յուսիկ արքեպ.՝ ս. Յակոբ Մծբնայ հայրապետի աջը, Յովհաննէս արքեպ.՝ Լուսաւորչի աջը, Ներսէս արքեպ.՝ Կենաց փայտը։ Ձախից՝ Եփրեմ եպ.՝ բալասանի անօթը, Մեսրոպ եպ.՝ հին միւռոնի աղաւնեայ անօթը, Մխիթար եպ.՝ Յակոբ առաքեալի աջը, Սարգիս եպ.՝ Թովմա առաքեալի աջը, Անանիա արքեպիսկոպոսը՝ ս. Թադէոս առաքեալի աջը, և Սուքիաս արքեպ.՝ աստուածամուխ ս. Գեղարդը։ Եպիսկոպոսներից յետոյ բուրվառակիր երկու վարդապետներ, հայրապետական քօղակիրներ և քշոցակիր չորս սարկաւագներ։

Իսկ ամպհովանու տակ Վեհափառ Հայրապետն էր՝ զգեստաւորված, որի ետևից երկու քղանցակիր վարդապետներ, լուսարարապետը և գաւազանակիրը։

Րոպէն հետաքրքրաշարժ էր և ժողովրդի տրամադրութիւնը հոգեզմայլ։ Առանձին հմայք էր պատճառում մայր տաճարի զանգակների ղօղանջիւնը և «Խորհուրդ խորին» շարականի երգեցողութիւնը, որը զգալի ու յուզիչ տպաւորութիւն էր անում և որը երգում էր Թիֆլիսից եկած նորընծայ տէր-Նիկողայոսն իր ուժեղ ձայնով։

«Ողջոյնից» առաջ Հայրապետը բազմելով աթոռին սեղանի հիւսիսային կողմում՝ աջից ու ձախից շրջապատված 12 եպիսկոպոսներով՝ կատարեց միւռոնի օրհնութեան կարգը։

Աւուր պատշաճի Աւետարանը, աղօթքները, քարոզները, ընթերցուածքներն ու շարականները թէ Վեհափառ Հայրապետը և թէ եպիսկոպոսները հերթով կարդացին։ Եւ երբ Հայրապետը սկսեց կարդալ «Ս. Ահաւոր» գիրքը, լուսարարապետ Ղևոնդ եպիսկոպոսը բացեց միւռոնի կաթսայի կափարիչը։ Իսկ դպիրները երգեցին «Բացիր, Տէր, զդրունս երկնային» շարականը, որի ժամանակ Հայրապետը Թափեց կաթսայի մէջ նախ ծաղիկների նիւթերը, բալասանը և ապա «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգեցողութեամբ Թափեց կաթսայում հին միւռոնը, տեառնագրելով-խաչակնքելով և խառնելով միւռոնը ասելով՝ «Օրհնեսցի և սրբեսցի միւռոնս այս», և այսպէս կարգով բոլոր մասունքները տեառնագրելով։

Դրանից յետոյ Սուքիաս արքեպ. կարդաց Աւետարանը, իսկ Հայրապետը «Պահպանիչ» ասելով վերջացրեց միւռոնօրհնութեան կարգը, շարունակելով պատարագը։

Պատարագի աւարտումից յետոյ, հանդիսաւոր գնացքով և նոյն կարգով «Որ զինքն աստուածային» շարականով Հայրապետին ուղեկցեցին տաճարից մինչև վեհարանի դրսի դուռը, որտեղ Վեհը «Պահպանիչով» օրհնելով բոլորին արձակեց։

Կարգը պահպանելու որքան աշխատում էր գաւառապետը ոստիկաններով և Թիֆլիսեցիներից մի խումբ, բայց և այնպէս ժողովրդի անթիւ ու անհամար հոսանքը, իրարանցումն ու անկարգութիւնները անպակաս լինելով՝ ուշաթափութեան շատ դէպքեր տեղի ունեցան։

Ժամը 2½-ին սկսվեց հանդիսաւոր ճաշը, ամբողջ սեղանատունը լիքն էր։ Սեղանին նախագահում էր Նորին Վեհափառութիւնը։ Առաջին բաժակը առաջարկվեց Թագաւոր կայսրի, երկրորդը՝ Կայսրուհու և Թագաժառանգի, երրորդը փոխարքայի և իր ամուսնու, չորրորդը առաջարկվեց Վեհափառի, հայ ազգի, հոգևորականութեան, միաբանութեան, կոյսերի, վանահայրերի, յանձնաժողովի անդամների։ Խօսեցին Անանիա, Յուսիկ արքեպիսկոպոսները, Յուսիկ, Սիօն և Մագսուդեան վարդապետները, բժ. Նաւասարդեան, Զմշկեան և այլք։

Բաժակաճառերին մէջ ընդ մէջ երգեցին «Այսօր երկնայինքն ուրախացան», «Էջմիածին ի Հօրէ» և «Իմաստուն կուսանք» շարականները։

Վեհը Թողնելով սեղանը, հիւրերը շարունակեցին և ապա շնորհակալութիւն յայտնելով միաբանութեանը ցրվեցին։

Մ. Զմշկեան

ՄԻ ԲՈՂՈՔԻ ԱՌԻԹՈՎ

Մինչև այժմ ինձ Թւում էր, որ ուսուցիչները բացարձակապէս յարած կը լինեն Էջմիածնի Յօբելեանական Յանձնաժողովին և կողմնակից դպրոցական ֆօնդին։ Բայց կարդալով «Կաւոն» շաբաթաթերթի № 42-ում Երևանի Թեմի մի խումբ ուսուցիչների՝ Թւով 25 հոգու՝ կոլեկտիվ բողոքը, միանգամայն հիասթափվեցի և խորը ցաւ զգացի, որ ընկեր-ուսուցիչները մօտ լինելով դպրոցական կեանքին՝ չը սԹափվեցին և սրտի բերկրանքով չողջունեցին դպրոցական ֆօնդի առաջարկութիւնը, որի իրագործմամբ մասամբ կապահովվի դպրոցների նիւթականը, որով և կանոնաւորված կը լինի ուսուցիչների ռոճիկների վարձատրութիւնը։

Բաւական չէ, որ ընկեր ուսուցիչները մոլորվել ու սխալանքի մէջ են ընկել միանալով Թիֆլիսի միակողմանի, կուսակցական յանձնաժողովին, այլ և հրաւէր են կարդում ընկեր ուսուցիչներին եւ ինտելիգենտ դասակարգերին հրապարակ գալ արտայայտվելու այդ մասին եւ առաջ քաշել իրանց պատճառաբանութիւնները։

Արդ հարց է ծագում, Թէ այս կամ այն Թեմի որևէ ուսուցիչը, նոյնիսկ մի խումբ ուսուցիչները իրաւունք ունեն չը կատարելու հոգևոր բարձր իշխանութեան առաջադրութիւնները։ Կարծում եմ, որ ոչ, որովհետև մենք ուսուցիչներս ստորադրեալներ ենք հոգևոր իշխանութեանը, որից ստացված հրահանգները անպայման պէտք է ի կատար ածենք, նոյնիսկ լինի դա մեր համոզմունքին հակառակ. Նամանաւանդ այս դէպքում, որ հրամայողը հանդիսանում է Կաթողիկոսը իր ստորադրեալ առաջնորդ եպիսկոպոսի միջոցով։ Եւ վերջապէս ընթերցող հասարակութիւնը ինչով կերաշխաւորվի, որ գրչով բողոքող պարոնները իր ժամանակին կը բողոքեն նաև գործով, քանի որ անյայտ են մեզ բողոքողների անուն-ազգանունները։

Իմ կարծիքով՝ բոլորովին աւելորդ են նման բողոքներն ու հրաւէրները. մենք ուսուցիչներս որպէս նախանձախնդիրներ դպրոցների բարգաւաճմանը՝ բարոյական պարտք պէտք է զգանք յարելու Էջմիածնի Յօբելեանական Յանձնաժողովին և նպաստել դպրոցական ֆօնդին և, որ գլխաւորն է, անպայման ճանաչել մեր իրաւունքի սահմանները եւ յարգել օրէնքը։

Աստ. Վարդանեան

Թազա գիւղ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Պետերբուրգում կովկասեան բարձր կրթական հաստատութեան հարցը կը քննվի այս շաբաթ մինիստրների խորհրդում Կովկասի փոխարքայի մասնակցութեամբ։ Որոշված է այդ կարևոր խնդրի քննութեանը մասնակից անել տալ բոլոր մինիստրներին առանց բացառութեան։

◆ Կովկասի փոխարքան դիմեց ֆինանսների և առևտրի մինիստրներին, խնդրելով ներկայացուցիչներ ուղարկել Թիֆլիսում կայանալիք բամբակագործների համագումարին։

◆ Թիֆլիսի կանանց բարձր դասընթացների խորհրդի վերջին նիստում որոշվել է քիմիայի դասատու հրաւիրել հիւանդութեան պատճառով հեռացած պրոֆ. Խարչիկովի փոխարէն Օդեսսայի համալսարանի պրոֆէսոր Պ. Գ. Մէլիքովին, որ արդէն տուել է իր համաձայնութիւնը։

◆ Երէկ երեկոյեան Թիֆլիսից Պետերբուրգ մեկնեց Էջմիածնից եկած Մեսրոպ եպ. Տէր-Մովսիսեան, որին Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից տրված են մի քանի յանձնարարութիւններ՝ վերաբերեալ հերթական կարևոր խնդիրների։

◆ Որոշված է սառցային խնդրով զբաղվողների հետևեալ համագումարը կայացնել Թիֆլիսում։

◆ Հոկտ. 14-ին նշանակված է Թիֆլիսի Հայոց Դրամատիկական Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը՝ կանոնադրութեան փոփոխութեան նախագիծը քննելու համար։

◆ Թիֆլիսի գաւառի զանազան գիւղերից մԹերքներ բերող գիւղացիների համար վճռված է առանձին շուկաներ յատկացնել Վէրայում, Կուկիայում և Զուգուրէթում։

◆ Հոկտ. 3-ից ձեռնարկվեց ցուցակագրելու Հալաբարում այն հողաբաժինները, որոնք յատկացված են Կախէթիայի երկաթուղու համար։

◆ Հինգ օր առաջ Թիֆլիսում տեղի ունեցած երկրաշարժը կրում էր սոսկ տեղական բնոյթ և հետևանք էր ստորերկրեայ դատարկ տեղերի փլուածքի։ Իր ոյժով յիշեալ երկրաշարժը երկու աստիճանով միայն պակաս էր 1900 Թ. տեղի ունեցած Ախալքալաքի յայտնի երկրաշարժից։ Թիֆլիսի ֆիզիքական դիտարանի սպասածով՝ երկրաշարժը զգալի վնասներ էր պատճառելու, սակայն, բարեբաղդաբար, ոչինչ չեղաւ։

◆ Նորերս Պետերբուրգում հրատարակվել է Շահիսարի «Ջհուդ-Բուշան» մեծ վէպի ռուսերէն Թարգմանութիւնը, պատկերազարդ և հեղինակի լուսանկարով, ընտիր Թղթի վրա և գեղեցիկ տպագրութեամբ։ Գինն է 1 ր. 25 կ.։

◆ Պետերբուրգի Հեռագրական Գործակալութիւնը ընդառաջ գնալով հասարակութեան այն բնական հետաքրքրութեան, որ առաջ է բերել բալկանեան պատերազմը, պատերազմի Թատերաբեմն է ուղարկել աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալու նպատակով յատուկ Թղթակիցներ։ Աւելորդ ծախքերը ծածկելու համար գործակալութիւնը առանձին յաւելեալ վճար է նշանակել խմբագրութիւնների վրա։

◆ Երկրագործութեան գլխաւոր կառավարչի կովկասեան լիազօր Արխիպովը ծառայութեան գործով մեկնեց Բաթում։

◆ Սեպտեմբերի 1-ից մինչև 30-ը Կ. Հ. Բ. Ը. ընթերցարանն են յաճախել 3750 հոգի, որից 2704-ը արական, իսկ 1046-ը իգական սեռից։ Գրադարանի բաժանորդներին տրված է տանը կարդալու համար 826 գիրք, որից 453-ը հայերէն, իսկ 373-ը ռուսերէն։ Ընթերցարանում կարդալու համար տրված է 201 գիրք, որից 145-ը հայերէն, իսկ 56-ը ռուսերէն։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպէրա

Արքունական Թատրոնում հոկտ. 3-ին այս սէզօնում առաջին անգամ ներկայացվեց յայտնի «Կարմէն» օպէրան։

Անսամբլը աջող էր։ Համանուն դերի մէջ հանդէս եկաւ Թիֆլիսի երաժշտասէրներին ծանօթ տ. Կովէլկովան, որ կարողացաւ դուրս գալ իր ծանր դերից երգի ու խաղի միակերպ աջողութեամբ։

Դոն-Խօզէի դերը կատարող Դանիլովը խոստանում է գրաւել հասարակութեան համակրանքը իր ախորժելի տէնօրով և մանաւանդ կենդանի խաղով։

Միքէլի դերը տրված էր դեռատի երգչուհի Բիօլինին, որ այդ օրը մի պլիւս աւելացրեց իր անուան վրա, խաղալով ու երգելով զգացված։ Ձայնը իր քաղցր տեմբրով, երաժշտականութեամբ, լսվում է առողջ կրծքից, Թէև վերին նօտաներից օբիօրդը խուսափում է։

Շատ լաւ տարաւ սովորականի նման իր դերը Եարօսլավսկին, որի դրական կողմերից մէկը անշուշտ մաքուր առոգանութիւնը պէտք է նկատել։

Աչքի էր ընկնում բեմխսեօրական մասի նորութիւնը, ինչպէս նաև այս անգամ նպաստաւոր էր բալէտի տպաւորութիւնը։

Ներկայ օպէրային խումբը առանձին շնորհակալութիւն յայտնելու է օրկէստրի կազմին, որի փորձված անդամները նպաստում են գործին ամեն կերպ։

Ե.

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱԳՒՈՒՄ

«Անյայտ կինը»

Բագու, 28 սեպտ.

Բիսսօնի «Անյայտ կին» կամ «Մադամ X» դրաման, որի բովանդակութիւնն իր ժամանակին լոյս է տեսել «Մշակի» էջերում, տեղիս հայ դրամատիկ խումբը տ. Սիրանոյշի ղեկավարութեամբ երէկ երեկոյեան բեմ հանեց եղբ. Մայիլեանների Թատրոնում։

Պիէսը գրված է ֆրանսիական մելոդրամներին յատուկ ձևով, սակայն նրա մէջ աւելորդաբանութիւններ չը կան և հանդիսականներն սկզբից մինչև վերջ հետաքրքրութեամբ հետևում են պիէսին։

Խումբը բաւականին աջողութեամբ բեմ հանեց այդ պիէսը. զգացվում էր, որ խաղացողներից ամեն մէկը ջանք է գործ դրել պիէսի աջողութեան վրա. միակ պակասութիւնը պ. Ոսկանեանի անաջող խաղն էր, որը շատ բան էր փչացնում։ Ֆլերիօյի դերում պարոնը բոլորովին իր տեղը չէր և առհասարակ այդպիսի դերերը նրան չեն աջողվում, և զարմանալի է, Թէ ինչու է նա վերցրել, կամ ինչու էին տուել նրան այդ դերը։

Պիէսի կենտրոնական ֆիգուրա Ժակլէնի (Անյայտ կին) դերը խաղում էր տիկին Սիրանոյշ իրան յատուկ տաղանդով։ Մանրամասն խօսել տիկնոջ խաղի մասին աւելորդ կը լինի. կասեմ միայն այն, որ նա տուեց մի ամբողջացրած տիպ։

Երկրորդ գործողութեան մէջ գեղեցիկ պարտնեօր էր տիկնոջը պ. Զարիֆեանը (Լարօկ)։ Մենք առաջին անգամն էինք տեսնում պարոնին այդպիսի բնորոշ դերում և պէտք է խոստովանենք, որ ինչպէս մենք տեսել ենք մի քանի ներկայացումներից՝ որքան նա գեղեցիկ է դրամատիկ դերերում, այնքան էլ լաւ էր Լարօկի փոքրիկ, բայց տիպիկ դերում և միանգամայն արժանի, համակրական այն ցոյցերին որ ցոյց է տալիս հասարակութիւնը նրան։

Պերիսարի բնորոշ դերում գեղեցիկ էր պ. Աւետեան և մեծ զուարճութիւն պատճառեց հասարակութեանը իր խաղով։ Նրա անբաժան ընկեր-պարտնեօր պ. Ահարոնեանը (Մերիվել) անման էր իր միմիկաներով։

Լաւ էին Շահխաթունի (Ռայմօնդ), Միրզոյեան (բժիշկ Շէնէլ), տ. Արուս Ոսկանեան (Ելէն)։ Միանգամայն անաջող էր պ. Անդրանիկ (Նօյէլ)։

Մնացածները պահպանում էին անսամբլը։

Հասարակութիւն դարձեալ շատ քիչ կար։

Հինգշաբթի, հոկտեմբերի 4-ին, խումբը, Կուլտուրական Միութեան գեղարուեստական սեկցիայի դրօշակի տակ, խաղում է «Հիդրա»։

Վաղարշակ Թումանեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Տուզի քաղաքը չերնոգորցիք վերցրին կատաղի կռւից յետոյ։ Չերնոգորցիք ձեռք ձգեցին մեծ քանակութեամբ ռազմամթերք։ Թիւրք գերիներին ուղարկեցին Պոդգորիցա, ուր ժողովուրդը ցնծութեան մէջ է։

◆ Սօֆիայի Թիւրքաց դեսպանը մեկնեց Կ. Պօլիս։

◆ Սերբիան պաշտօնապէս պատերազմ յայտարարեց այն օրից, երբ Թիւրքաց զօրքերը սահմանագլխում անակնկալ յարձակվեցին սերբիական զօրքերի վրա։

◆ Մալիսօրները և միրդիտները չերնոգորական Նիկոլայ Թագաւորին յայտարարեցին Ալբանիայի Թագաւոր։

◆ Բուլգարական զօրքերը դիմեցին յարձակողական արշաւանքի. Կռիւը շարունակվում է փոփոխական աջողութեամբ։

◆ Յոյները Բօնիցի մօտ յարձակվեցին Թիւրք զօրքերի վրա, բայց յետ մղվեցին զգալի կորուստներով։

◆ Չերնոգորական պրինց Պետրը հեռագրում է Պոդգորիցայից. «Երեք օր է կատաղի կռիւ է։ Թշնամին պարտութիւն կրեց գլխովին։ Թշնամու բերդերն ու Թնդանօթները մեր ձեռքումն են։ Շատ օֆիցէր և զինւոր գերել ենք»։

◆ Տրիպոլիսից շտապով Կ. Պօլիս կանչվեց յայտնի Էնվէր բէյը՝ չերնոգորցիների դէմ գործելու համար։

◆ Ցէտինիէի հիւանդանոցները լի են վիրաւորներով։

◆ Պարսից կառավարութիւնը նոր բարենորոգումներ է խոստանում Իրանի ժողովրդի համար։ Նախնական ծախքերի համար նա Անգլիայից և Ռուսաստանից խնդրում է 2 միլիօն րուբլու փոխառութիւն։

◆ «Berl. Zeit.»-ը հաղորդում է, որ Աւստրիան իր զօրքերը մօտեցրել է ռուսական սահմանին։ Կառուցանվում են բերդեր։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տէլէֆօն № 1175.
(ա. օ.) 377. 100—20

Մի ուսուցչուհի,
որ ունի հայոց միջնակարգ դպրոցի կրթութիւն, կարուձևի վկայական, ձեռագործի հմտութիւն և հնգամեայ փորձառութիւն, պաշտօն է որոնում հայոց դպրոցներում։
Հասցէն՝ Эривань, А. А. Сараджянцу.
(կ.) 743. 2—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿ.
Լոյս տեսաւ և ուղարկվեց բոլոր բաժանորդներին «Հանրային մատենադարանի» № 2 գիրքը, Իլիա Ճավճավաձէի
«ՄՈՒՐԱՑԿԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ»,
Թարգմ. վրացերէնից Տ. Փիրումեան։ Հատով գինն է 15 կոպէկ։ Վեցամսեայ բաժանեգինն է 1 ր. 80 կոպ.։ Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին և Ընկ. գաւառական աշխատակից անդամներին ու գործակալներին։ Պահեստը Ընկերութեան մօտ՝ Тифлисъ, Кавказское Арм. Изд. О-во. Бебут. 25.
(ա. օ.) 740. 2—2

Յ. Դաղբաշեանի
ՌՈՒՍԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔԵՐ, յարմարեցրած հայ ուսումնարանների կեանքին և ծրագրին, Ա. տարի՝ գինը 25 կոպ., Բ. տարի՝ գինը 40 կոպ.։
ՌՈՒՍ-ՀԱՅ լիակատար բառարան գինը 8 րուբ., կազմած 9 ր.։
ՀԱՅ-ՌՈՒՍ լիակատար բառարան, գինը 6 րուբ., կազմած 6 ր. 50 կ.։
Գումարով գնողներին զեղչ։
Բաժանորդագրութիւն Ռուս-Հայ առձեռն բառարանի 2 ր. 50 կ.։
Հանրագիտական բառարանի՝ 8 ր.։
Դիմել՝ А. Дагбашяну. Въ Тифлисъ. Головинскій пр. 12.
(Հ. ու. կ.) 717. 9—7

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Ինժեներ Ի. Ս. Պօնդոյեվի
Թիֆլիս, Ելիզավետին. փ. № 164, անկիւն Բակինսկայա փ.։ Տէլէֆօն № 10-93.
ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՑԵՄԵՆՏ ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ
ԵՐԿԱԹ—անկիւնի, կաթսայի, բրիֆլէնոյ; տանիքի՝ սև և ցինկով պատած։ ԱՍՖԱԼՏ սըզրանեան։ ԳՈՒԴՐՕՆ, կրակի դիմացող աղիւս և կաւ։ Շինութեան և փուչ ԱՂԻՒՍ, ԿՂՄԻՆՏՐ մարսէյլեան տեսակի և այլ առարկ.։ Աղիւսի սեփակ. գործարան Թիֆլիսում։ Ամեն տեսակ շինարարական նիւթեղէն. համար տրված պատուէրները կատարվում են շուտափոյթ։
(չ.ու.կ) 617. 50—19

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
Առևտրական Գիտութիւնների Կուրսերում
Նոր մեթոդով սովորեցվում են
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ Ճշապողական Դասընթացներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւններ կուրսերի գրասենեակում—ամեն օր ժամը 10-12-ը և 4—7-ը։ Միխայլօվսկի պր. № 24—4.
(ա. օ.) 643. 0—26

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից

1) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I	գ. 1 ր. —
2) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրժինի, I և II հատորներ	1 ր. 50
3) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի	— 40 կ.
4) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր. 20 կ.
5) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի	— 40 կ.
6) ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ, բժշկ. Գ. Բաբեանի	
I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն	1 ր. —
II » Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան	1 ր. 60 կ.
7) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ	— 15 կ.
8) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի	— 50 կ.
9) ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Պետրոս Ադամեանի	1 ր. —
10) ԹՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի	— 40 կ.
11) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի	— 20 կ.
12) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի	— 35 կ.
13) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով	— 15 կ.
14) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ. Մ.-ի	— 15 կ.
15) ՃԱՊՈՆԻԱ կամ ծագող Արեգակի երկիրը, Գ. Ի. Շրէյդէրի	— 25 կ.
16) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	— 30 կ.
17) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	— 25 կ.
18) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուտարեանի	— 80 կ.

Վերոյիշեալ 19 կտոր գրքերը, որոնց ընդհանուր արժէքն է 11 ր. 60 կ., վաճառվում են հետևեալ պայմաններով։
Նրանք, որոնք կը դիմեն մեզ՝ պահանջելով վերոյիշեալ գրքերից մի-մի օրինակ դրամը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ, իսկ նրանք, որոնք վերադիր վճարով կը պահանջեն, այդպիսիներին զեղչ կը լինի միայն 25%.
ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ։ (6) 50—41

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный